



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....	3
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....	6
3.1 Հետազոտության գլխավոր համակցությունը և ընտրանքի կազմակերպումը .....	6
3.2 Տեղեկատվության հավաքագրում .....	10
3.3 Հավաքագրված տեղեկատվության մշակում.....	12
3.4 Վերլուծություն.....	12
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	13
4.1 Ընդհանուր տեղեկություններ .....	13
4.2 Փաստաթղթաշրջանառության հետ կապված հարցեր.....	22
4.3 Փաստաթղթավորման հետ կապված հարցեր .....	39
5. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	80

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՎԵԼՎԱԾ 2

## 1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ ԿԲ ՓՄՁ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ Փոքր և միջին ձեռնարկություն
ԱՁ	Անհատ ձեռնարկատեր
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԲԸ	Բաժնետիրական ընկերություն
ԱԿ	Արտադրական կոոպերատիվ
ԻԱ	Իրավաբանական անձ
ՀԳՄ	Հսկիչ դրամարկղային մեքենա
ՀՎՀՀ	Հարկ վճարողի հաշվառման համար
ԳԾՄ	Գործարար ծառայություն մատուցող
ՀՀԾ	Հաշվապահական հաշվառման ծրագրեր
Առաքման գիրք	Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման գիրք
Հասույթի գիրք	Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գիրք

## 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի տնտեսական զարգացման ներկայիս փուլում կենսական նշանակություն ունեն հարկային համակարգի բարեփոխումները և պետություն-մասնավոր հատված գործընկերային հարաբերությունների ձևավորումը՝ միևնույն ժամանակ կրճատելով ստվերային տնտեսության ծավալները և ապահովելով հարկային մուտքերը: Այս իմաստով առաջնային խնդիր է տնտեսության մեջ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գործարքների փաստաթղթավորումը և փաստաթղթաշրջանառությունը: Այստեղ առկա խնդիրների կարգավորումը հնարավորություն կտա ստեղծել հավասար մրցակցային պայմաններ տնտեսավարողների համար՝ կրճատելով ստվերային տնտեսության ծավալները, նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը և հետագա տնտեսական զարգացման համար ստեղծելով նպաստավոր պայմաններ:

Ներկայումս մեր տնտեսությունում կատարվող ապրանքնաշրջանառության մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում առանց հաշվարկային փաստաթղթերի կամ գործարքի գնից էականորեն նվազեցված արժեքներով կատարվող գործարքները, ինչի հետևանքով ապրանքնաշրջանառության շղթան արտադրողից վերջնական սպառող կամ ներմուծողից սպառող շրջանառության ընթացքում կամ ընդհատվում է կամ ամբողջությամբ իրականացվում ՀԴՄ-ներով: Սրա արդյուքնում չի արտահայտվում գործարքի իրական գինը կամ հատուցումը:

Փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության խնդիրները պայմանավորված են.

1. օրենսդրական դաշտում թաստաթղթաշրջանառությունը կարգավորող նորմերի կիրառության սահմանափակությամբ,
2. տնտեսավարող սուբյեկտների կողմից
  - հաշվարկային փաստաթուղթ դուրս չգրելով,
  - հաշվարկային փաստաթուղթ չվերցնելով և չպահանջելով
  - իրական գործարքի գնից էականորեն տարբերվող գներով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելով:

Առաջին դեպքում այդ խնդիրները որոշակի լուծումներ են ստացել 2008թ.-ի օգոստոսի 21-ին ընդունված օրենսդրական փաթեթով, որտեղ հստակ սահմանվում են հաշվարկային փաստաթղթեր դուրս չգրելու դեպքերում խիստ պատասխանատվության միջոցների սահմանում, գործարքների կատարման փաստն ապացուցելու համապատասխան մեխանիզմների կիրառություն: Բացի այդ, կառավարությունը այդ նույն օրենսդրական փաթեթի տրամաբանական շրջանակի ներքո 2008թ.-ի օգոստոսի 7-ին ընդունել է 6 որոշումներ, որոնք ուղղված են հաշվարկային և վճարման փաստաթղթերի պարզեցմանը, ռեկվիզիտների նկատմամբ պահանջներին՝ «էստ էության» մոտենալուն և այլ: Այնուամենայնիվ,

տնտեսությունում առկա են այլ խնդիրներ. տեխնիկական և այլ հանգամանքներ, որոնք ունեն ուսումնասիրության կարիք:

Երկրորդ դեպքում հնարավոր է, որ առկա լինեն բազմաթիվ գործոններ, որոնք դժվարացնում են բոլորի կողմից «թուղթ տալը» կամ «վերցնելը», օրինակ՝ օրենսդրության պահանջներին տեղյակ չլինելը, օրենսդրության նպատակների և երկրում առկա խնդրների մասին իրազեկված չլինելը, սովերային գործելակերպը, ոչ ֆորմալ հատվածի գործարար միջավայրի սովորույթները, փաստաթղթերի լրացման տեխնիկական բարդությունը, վճարման ձևերի բարդությունը, համապատասխան սարքերից օգտվելու չիմացությունը, գործարքի մյուս կողմի ազդեցությունը, այլ՝ այդ թվում հոգեբանական պատճառներ:

Ելնելով վերոգրյալից՝ պահանջ էր առաջացել այս ամենը մեկ անգամ մանրակրկիտ ու օբյեկտիվ ուսումնասիրելու և առկա խնդիրների շուրջ առաջարկություններ ներկայացնելու, ինչը պայմանավորված է ս.թ. ապրիլի 11-ի «Փոքր ձեռնարկատիրական գործունեության ոլորտում հարկային օրենսդրության և վարչարարության կատարելագործմանն ուղղված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 188-Ա որոշմամբ, ինչպես նաև փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության սահմանված պահանջով գործընթացում առկա խնդիրները բացահայտելու անհրաժեշտությամբ:

### 3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետազոտության իրականացման, այդ թվում՝ նաև ընտրանքի կազմակերպման համար հիմք են ընդունվել նախապես տրված տեխնիկական առաջադրանքի պահանջները: Ըստ տեխնիկական առաջադրանքի հետազոտության ընտրանքը պետք է պարունակեր 500 տնտեսավարող միավոր, որոնք պետք է ներկայացնեն հանրապետության ողջ տարածքը, ինչպես նաև ներկայացնեն տարբեր տնտեսական ոլորտներ: Ընդ որում, տնտեսական ոլորտները, պայմանավորված հետազոտության արդյունքների վերլուծության առավել նպատակահարմարությամբ, տարանջատվել էին ըստ հետևյալ 5 խմբերի.

- արտադրություն,
- առևտուր ներքին (հանրապետության ներսում առևտուր իրականացնող (իրացնող) տնտեսավարող միավորներ),
- առևտուր արտաքին (ներմուծում և իրացում իրականացնող տնտեսավարող միավորներ),
- ծառայություններ (բնակչությանը ծառայություններ մատուցող տնտեսավարող միավորներ),
- այլ հատուկ գործունեություն (մասնավորապես, նոտարական գործունեություն, բանկային և վարկային կազմակերպություններ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ և այլն):

Այսպիսով, հետազոտությունը հարկ էր իրականացնել հանրապետությունում գործող տնտեսավարող միավորների (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի) շրջանակում:

Հաշվի առնելով վերը շարադրյալը՝ նպատակահարմար է համարվել հետազոտության համար որպես գլխավոր համակցություն<sup>1</sup> ընդունել Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի տվյալների բազան, որը տեղեկատվություն է պարունակում է 8253<sup>2</sup> տնտեսավարող միավորների վերաբերյալ: Նշված բազայի կիրառելիության նպատակահարմարությունը հիմնված է մի քանի գործոնների վրա: Նախ այն, որ նշված բազան մշտական մոնիթորինգի է ենթարկվում, ինչի արդյունքում այն արդիական է ինչպես գործել-չգործելու ենթատեքստով, այնպես էլ գործունեության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մասով: Այս հանգամանքը շատ կարևոր է հետազոտության արդյունավետության և որակի ապահովման համար, առավել ևս, որ նմանատիպ կամ ավելի արդիական տեղեկատվական բազա ներկայումս հասանելի չէ: Մյուս գործոնը, որը վկայում է վերը նշված բազայի կիրառելիության նպատակահարմարության

<sup>1</sup> Ընտրանքի համար հիմք հանդիսացող տնտեսավարող միավորների համընդհանուր բազա:

<sup>2</sup> 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ

մասին, դա բազայի միավորների մարզային բաշխվածությունն է, որը բավականին մոտ է հանրապետությունում գրանցված տնտեսավարող միավորների բաշխվածությանը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Գլխավոր համակցության մարզային բաշխվածությունը

	Տնտեսավարող միավորները բազայում, քանակ	Բազայի մարզային բաշխվածությունը, %	ՀՀ-ում տնտեսավարող միավորների մարզային բաշխվածությունը, %
Արագածոտն	397	4.8	3.3
Արարատ	636	7.7	6.0
Արմավիր	620	7.5	5.9
Գեղարքունիք	554	6.7	6.1
Լոռի	727	8.8	7.6
Կոտայք	766	9.3	8.4
Շիրակ	594	7.2	6.2
Սյունիք	520	6.3	4.6
Վայոց Ձոր	263	3.2	1.7
Տավուշ	447	5.4	3.9
Երևան	2729	33.1	46.2
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>8253</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

Բացառություն է կազմում, թերևս, Երևանի տեսակարար կշռի տարբերությունը, սակայն այստեղ պետք է նկատի ունենալ, որ գրանցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մեջ ներառված են ինչպես գործող, այնպես էլ չգործող միավորները: Մյուս կողմից, հետազոտության ներկայացուցչականության ապահովման տեսակետից ավելի արդյունավետ կլինի Երևանի բարձր կշռի փոխարեն ավելի շատ տնտեսավարողներ ընդգրկել մարզերից, քանի որ ըստ ընտրանքի մեթոդաբանության հաստատվում է, որ հավասար ներկայացուցչականություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է փոքր համակցությունում միավորների ավելի մեծ տոկոս ընտրել, քան՝ մեծ համակցությունում:

Ուշագրավ է, որ եթե գլխավոր համակցության բաշխումն ըստ որոշված տնտեսական գործունեության խմբերի համեմատենք ՀՀ-ում գրանցված տնտեսավարող միավորների՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի բաշխվածության հետ<sup>3</sup> (Աղյուսակ 2), ապա նույնպես որոշակի նմանություն է նկատվում, ինչը ևս հաստատում է գոյություն ունեցող բազայի ներկայացուցչական լինելու հանգամանքը: Մասնավորապես, ինչպես բազայում (գլխավոր համակցությունում), այնպես էլ պետական ռեզիստրի սվյալներով արտադրությանը զբաղվող տնտեսավարողների կշիռը 20 տոկոս է:

<sup>3</sup> ՀՀ-ում գրանցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ գործունեության տեսակների ստացվել է պետական ռեզիստրում գրանցման պահին հայտարարության հիման վրա, ինչը սակայն պարտադիր չէ որ իրական գործունեության տեսակը լինի:

Աղյուսակ 2. ՀՀ-ում գրանցված տնտեսավարող միավորների բաշխումն ըստ գործունեության ոլորտների<sup>4</sup>

	Արտադրություն		Առևտուր		Ծառայություններ		Այլ		Ընդամենը	
	քանակ	%, մարզում ընդամենի մեջ	քանակ	%, մարզում ընդամենի մեջ	քանակ	%, մարզում ընդամենի մեջ	քանակ	%, մարզում ընդամենի մեջ	քանակ	%, մարզում ընդամենի մեջ
Երևան	7154	16.9	25588	60.4	6141	14.5	3484	8.2	42367	100.0
Արագածոտն	789	26.4	1835	61.4	291	9.7	75	2.5	2990	100.0
Արարատ	1309	23.9	3447	62.9	587	10.7	140	2.6	5483	100.0
Արմավիր	1065	19.6	3658	67.3	570	10.5	143	2.6	5436	100.0
Գեղարքունիք	1239	22.3	3480	62.5	713	12.8	133	2.4	5565	100.0
Լոռի	1606	23.0	4310	61.7	818	11.7	257	3.7	6991	100.0
Կոտայք	1984	25.8	4453	58.0	990	12.9	250	3.3	7677	100.0
Շիրակ	1076	18.8	3903	68.2	587	10.3	153	2.7	5719	100.0
Սյունիք	1004	23.6	2650	62.4	497	11.7	95	2.2	4246	100.0
Վայոց Ձոր	352	22.5	936	59.8	241	15.4	35	2.2	1564	100.0
Տավուշ	728	20.2	2295	63.8	506	14.1	69	1.9	3598	100.0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>18306</b>	<b>20.0</b>	<b>56555</b>	<b>61.7</b>	<b>11941</b>	<b>13.0</b>	<b>4834</b>	<b>5.3</b>	<b>91636</b>	<b>100.0</b>

Աղբյուրը՝ Հայաստանի մարզերը թվերով 2002-2006, ԱՎԾ 2007

Աղյուսակ 3-ում ներկայացված է որպես գլխավոր համակցություն ընդունված բազայի բաշխումն ըստ մարզերի և նախապես որոշված տնտեսական գործունեության ոլորտային խմբերի: Հինգ գործունեության ոլորտ և 11 մարզ ունենալով՝ ստանում ենք 55 ստրատա (մատրիցի վանդակ):

Աղյուսակ 3.Գլխավոր համակցությունն ըստ մարզերի և տնտեսական գործունեության որոշված խմբավորման, քանակ

	Արտադրություն	Առևտուր ներքին	Առևտուր արտաքին	Ծառայություններ	Այլ(նոտարներ, բանկային և վարկային կազմակերպություններ, ՏՏ ոլորտ և այլ)	Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի
Ընդամենը	1635	2522	1158	2247	691	8253
%	20	31	14	27	8	100
Արագածոտն	84	151	38	74	50	397
Արարատ	98	261	98	130	49	636
Արմավիր	115	230	66	176	33	620
Գեղարքունիք	81	211	65	148	49	554

<sup>4</sup> **Արտադրությունը** ներառում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (NACE Rev 1.1) գյուղատնտեսություն, ձկնորսություն (ձկնաբուծություն), հանքագործություն, մշակող արդյունաբերություն, էներգետիկա և շինարարություն բաժինները, **Առևտուրը**՝ մեծածախ, մանրածախ և ավտոմեքենաների առևտուր բաժինը, **Ծառայությունները**՝ տրանսպորտ և կապ, հյուրանոցներ և ռեստորաններ, կրթություն, առողջապահություն և կոմունալ ծառայություններ բաժինները, **Այլ ոլորտը**՝ ֆինանսական միջնորդություն, անշարժ գույքի գործառնություններ և պետական կառավարում բաժինները:



Լոռի	166	200	100	211	50	727
Կոտայք	148	231	115	223	49	766
Շիրակ	117	133	83	211	50	594
Սյունիք	114	146	81	130	49	520
Վայոց Ձոր	49	82	49	66	17	263
Տավուշ	84	199	66	84	14	447
Երևան	579	678	397	794	281	2729

Ունենալով գլխավոր համակցությունն ըստ անհրաժեշտ բաշխվածության և հիմք ընդունելով հետազոտության նպատակը՝ ընտրանքի ձևավորման համար առավել նպատակահարմար մեթոդն այս դեպքում համամասնական (պրոպորցիոնալ) ընտրանքն է՝ ըստ յուրաքանչյուր բաշխվածքի խմբի (ստրատայի):

Կիրառելով համամասնական ընտրանքի հետևյալ բանաձևը.

$$n_h = n * \frac{N_h}{N}$$

որտեղ՝

n-ը - ընտրանքի չափն է (տվյալ դեպքում 500),

n<sub>h</sub> -ը - ընտրանքի չափն է h-րդ ստրատայում,

N<sub>h</sub> -ը - ընտրանքի նպատակային գլխավոր համակցության չափն է h-րդ ստրատայում,

N-ը - գլխավոր համակցության չափն է (տվյալ դեպքում 8253):

կատանանք ընտրանքի հետևյալ բաշխումը (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի և տնտեսական գործունեության որոշված խմբավորման, քանակ

	Արտադրություն	Առևտուր ներքին	Առևտուր արտաքին	Ծառայու- թյուններ	Այլ(նոտարներ, բանկային և վարկային կազմակերպու- թյուններ, SS ոլորտ և այլ)	Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի
<b>Ընդամենը</b>	<b>99</b>	<b>153</b>	<b>70</b>	<b>136</b>	<b>42</b>	<b>500</b>
<b>%</b>	<b>20</b>	<b>31</b>	<b>14</b>	<b>27</b>	<b>8</b>	<b>100</b>
Արագածոտն	5	9	2	4	3	23
Արարատ	6	16	6	8	3	39
Արմավիր	7	14	4	10	2	37
Գեղարքունիք	5	13	4	9	3	34
Լոռի	10	12	6	13	3	44
Կոտայք	9	14	7	14	3	47
Շիրակ	7	8	5	13	3	36
Սյունիք	7	9	5	8	3	32
Վայոց Ձոր	3	5	3	4	1	16
Տավուշ	5	12	4	5	1	27
Երևան	35	41	24	48	17	165

Հարկ է նշել նաև, որ չնայած ընտրանքը կազմակերպվել է գլխավոր համակցության ներկայացուցչականությունն ապահովելու բոլոր գործոնները հաշվի առնելով, սակայն ընտրանքի չափի փոքր լինելը հնարավորություն է տալիս ապահովելու միայն հանրապետության մակարդակով ներկայացուցչական արդյունքների ստացում, իսկ յուրաքանչյուր մարզում ըստ գործունեության խմբերի մասերի (ստրատաների) տեղեկատվությունը առանձին վերցրած կարող է միայն ընդհանուր կողմնորոշում տալ, այլ ոչ թե ապահովել ներկայացուցչական արդյունքներ կոնկրետ ստրատալի համար:

Վերջում, անհրաժեշտ ենք համարում նաև նկարագրել գլխավոր համակցությունից հարցմանը ենթակա կոնկրետ տնտեսավարող միավորների ընտրության մեթոդը (ընտրանքի մեթոդաբանությունը): Նշված ընտրանքն իրականացնելիս կոնկրետ տնտեսավարող միավորների ընտրության պատահականությունն ապահովվել է՝ կիրառելով սոցիոլոգիական և վիճակագրական հետազոտություններում լայն տարածում ունեցող «քայլի» եղանակը:

Իրականացված գործողություններն ըստ հերթականության հետևյալն են.

1. Հետազոտության գլխավոր համակցության (աղյուսակ 3) յուրաքանչյուր ստրատալում (տվյալ մարզից տվյալ ոլորտում գործող տնտեսավարող միավորներ) ներգրավված տնտեսավարող միավորները դասակարգվել են այբբենական կարգով (ըստ անվանումների) և համարակալվել:

2. Գլխավոր համակցության յուրաքանչյուր ստրատալում նշված թիվը բաժանվել է ընտրանքի համակցության (աղյուսակ 4) համապատասխան թվի վրա և կլորացվել մինչև մոտակա գույգ թիվը, այսպիսով յուրաքանչյուր ստրատալի համար որոշվել է ընտրանքի քայլը:

3. Այբբենական կարգով դասակարգված և համարակալված ցուցակներից համապատասխան քայլով ընտրվել են հարցմանը ենթակա տնտեսավարող միավորները:

Մեթոդաբանությամբ նախատեսված է նաև, որ եթե ինչ-ինչ պատճառներով հնարավորություն չլինի հարցում անցկացնել տվյալ ընտրված սուբյեկտում, ապա փոխարենը, որպես հարցմանը ենթակա սուբյեկտ, կընտրվի տվյալ ստրատալի ցուցակում իրեն հաջորդող մյուս սուբյեկտը:

### **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ**

Հետազոտությունն իրականացվել է հարցման միջոցով, որի շրջանակներում մշակվել է հարցման հարցաթերթիկը: Մշակված հարցաթերթիկի նախագիծը ԳԾՄ կազմակերպություններում փորձաքննություն անցնելուց հետո ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի աշխատանքային խմբի առաջարկությունների և դիտողությունների հիման վրա հարցաթերթիկը լրամշակվել է: Հարցաթերթիկը ընդհանուր առմամբ պարունակում է 43 հարցադրում, որոնք իրենց հերթին պարունակում են բազմաթիվ ենթահարցեր: Տնտեսավարող

միավորի վերաբերյալ հիմնական տեղեկություններից բացի, հարցաթերթիկի հարցերը վերաբերվում են առաջնային փաստաթղթերի, ռեգիստրների և գրանցամատյանների կիրառելիությանը, վերջիններիս լրացման, հաշվառման և շրջանառության բարդություններին, առանձնահատկություններին և ժամանակատարությանը (հավելված 1): Հարցաթերթիկը բաղկացած է 3 բաժնից: Հարցաթերթիկի առաջին բաժինը՝ (ընդհանուր տեղեկություններ) բաղկացած է 8 հարցից, որոնց նպատակն է հավաքել հարցվողների ինչպես նաև փաստաթղթավորման ընդհանուր կիրառական հարցերի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն: Երկրորդ բաժինը (փաստաթղթաշրջանառության հետ կապված հարցեր) բաղկացած է 9 հարցից, որոնք կոչված են բացահայտելու գործարքները առաջնային փաստաթղթերով կատարելու (փաստաթղթավորելու) և հաշվառման ռեգիստրների և գրանցամատյանների հաշվառման հիմնական խոչընդոտները, ինչպես նաև անուղղակիորեն բացահայտելու չփաստաթղթավորված գործարքների տեսակարար կշիռը ընդհանուր գործարքների ծավալում: Երրորդ բաժինը (փաստաթղթավորման հետ կապված հարցեր) բաղկացած է 26 հարցից, որոնց նպատակն է բացահայտել փաստաթղթերի հետագա հաշվառման հետ կապված հիմնախնդիրները, դրանց խորքային պատճառները, ինչպես նաև փաստաթղթավորման տարբեր տեսակի այլընտրանքային մոտեցումների կիրառման դեպքում գործարարի հնարավոր մոտեցումները:

Հետազոտության հարցաթերթիկի և ընտրանքի հաստատումից հետո կազմակերպվել են տնտեսավարող միավորների շրջանում հարցման անկացման աշխատանքները: Հարցումը անցկացնող Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատակիցների համար կազմակերպվել են ընդհանուր առմամբ 3 սեմինար-պարապմունքեր, որոնց ընթացքում մասնագետների կողմից Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի հարցազրուցավարները հրահանգավորվել են և վերջիններիս անհրաժեշտ պարզաբանումներ են ներկայացվել հարցաթերթիկում տեղ գտած բոլոր հարցադրումների վերաբերյալ՝ հարցվողների մոտ առաջացող հարցերին հարցազրուցավարների կողմից պատշաճ բացատրություններ տալու նպատակով:

Հարցման իրականացման արդյունքում հարցման են ենթարկվել ՀՀ-ում գործող 500 տնտեսավարող սուբյեկտներ, որոնց մարզային և ոլորտային բաշխումը համապատասխանում է հետազոտության տեխնիկական առաջադրանքով նախատեսված կլաստերային բաշխմանը:

Համաձայն մեթոդաբանությանը, եթե ինչ-ինչ պատճառներով հնարավորություն չի եղել հարցում անցկացնել տվյալ ընտրված սուբյեկտում, ապա փոխարենը, որպես հարցմանը ենթակա սուբյեկտ, ընտրվել է տվյալ ստրատայի ցուցակում իրեն հաջորդող մյուս սուբյեկտը: Առաջնորդվելով այս սկզբունքով՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի փորձագետները հարցում անցկացնելու առաջարկով դիմել են շուրջ 900 տնտեսավարող սուբյեկտի, ինչը նշանակում է, որ նշված մեթոդաբանությամբ ընտրված շուրջ 400 տնտեսավարող սուբյեկտի մոտ հարցում չի

հաջողվել անցկացնել: Նշված բացթողումները բացատրվում են հիմնականում հետևյալ 3 պատճառներով.

- տնտեսավարող սուբյեկտներում, ծանոթանալով հարցաթերթիկի բովանդակությանը, ուղղակիորեն հրաժարվել են հարցմանը մասնակցելուց (շուրջ 50 %),
- տնտեսավարող սուբյեկտների կողմից լրացվել է հարցաթերթիկը, սակայն ներկայացված տեղեկատվությունը ակնհայտորեն խեղաթյուրված է եղել և/կամ թերի և տվյալ հարցաթերթիկը չի հաշվառվել (շուրջ 40 %),
- տնտեսավարող սուբյեկտում հարցման անցկացման ժամանակաշրջանում բացակայել է փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության համար պատասխանատու անձը կամ անձինք (շուրջ 10 %):

Հատկանշական է նաև, որ առաջին երկու պատճառներով պայմանավորված բացթողումները հիմնականում տեղի են ունեցել ՀՀ մարզերում:

#### **ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ**

Հարցման ավարտից հետո լրացված 500 հարցաթերթիկներում պարունակվող տեղեկատվությունը նախապես մշակված կողավորմամբ մուտքագրվել է համակարգիչ: Մուտքագրված տեղեկատվությունը մասնագետների կողմից մշակվել և վերլուծվել է նման հետազոտությունների անցկացման համար լայն տարածում գտած SPSS վիճակագրական համակարգչային ծրագրի միջոցով, ինչի արդյունքում դուրս է բերվել բազմաթիվ աղյուսակներ, դիագրամներ և գրաֆիկներ, որոնք համապարփակ և մանրամասն տեղեկատվություն են տալիս հարցման արդյունքների վերբերյալ, ինչպես բոլոր 500 տնտեսավարող միավորների, այնպես էլ վարչիներին առանձին ենթախմբերի համար (ըստ մարզերի, գործունեության ոլորտի, հարկման ռեժիմի, կազմակերպասիրավական ձևի, գործունեության ժամկետի և այլն):

#### **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի և գործընկեր ԳԾՄ կազմակերպությունների մասնագետների կողմից լրացված հարցաթերթիկների բոլոր հարցերի/ենթահարցերի վերաբերյալ իրականացված համազարգչային վերլուծությունների (այդ թվում խաչաձև վերլուծությունների) արդյունքում լիարժեք արտացոլվել են հարցման քանակական արդյունքները, որոնք, տարածվելով ամբողջ տնտեսության վրա, բավարար պատկերացում են տալիս ՀՀ-ում տնտեսավարող միավորների շրջանում փաստաթղթավորմանն առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ, ինչը անհրաժեշտ հիմք է հանդիսացել հետազոտության հետագա շարադրանքում տվյալ հիմնախնդիրների վերաբերյալ հիմնավորված եզրակացությունների և համապատասխան իրավաօրենսդրական և ընթացակարգային փոփոխությունների իրականացման վերաբերյալ առաջարկությունների մշակման համար:

#### 4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքին համաձայն Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մասնագետները, անկախ փորձագետները և Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից ընդգրկված ԳԾՄ կազմակերպությունը հարցման հարցաթերթիկը մշակելուց և այն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի աշխատանքային խմբի հետ համաձայնեցնելուց հետո իրականացվել է հարցում 500 տնտեսավարող սուբյեկտների շրջանում՝ հիմնվելով գլխավոր համակցության և հետազոտության ընտրանքի վրա: Հավաքագրված տեղեկատվությունը SPSS համակարգչային ծրագիր մուտքագրելուց և ելքային տվյալները դուրս բերելուց հետո մասնագետների կողմից դրանք վերլուծվել են, կազմվել են համապատասխան աղյուսակներ և դիագրամներ:


Հիմք ընդունելով իրականացված հետազոտության արդյունքները՝ մասնագետների կողմից մշակվել են փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության արդյունքները ներկայացված և վերլուծված են ստորև՝ ըստ հարցաթերթիկի կառուցվածքի:

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ հարցման արդյունքների հարցմանը մասնակցած տնտեսավարող սուբյեկտների բաշխվածությունն ըստ կազմակերպատիրակական կարգավիճակների ներկայացված է ստորև.


*Գծապատկեր 1.*



Այստեղ և հետայսու հարցման արդյունքում ստացված պատկերները հնարավորություն են տալիս հետազայում տարբեր հարցումների արդյունքները վերլուծել ըստ համապատասխան բաղադրիչների:


Հարցմանը մասնակցած տնտեսավարող սուբյեկտների գործունեության բաշխվածությունն ըստ հիմնական ոլորտների հետևյալն է.

**Գծապատկեր 2.**



Հարցմանը մասնակցած տնտեսավարող սուբյեկտները գործում են ՀՀ-ում առկա բոլոր 3 հարկային ռեժիմներում: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ 2008 թվականին արտադրող և ծառայություն մատուցող տնտեսավարող սուբյեկտները զրկված են պարզեցված հարկի ռեժիմում աշխատելու հնարավորությունից:


**Գծապատկեր 3.**



Հարցման արդյունքում ստացված պատկերը հնարավորություն կտա հետագայում տարբեր հարցումների արդյունքները վերլուծել ըստ հարկային ռեժիմների:

Հարցմանը մասնակցած տնտեսավարող սուբյեկտները բաժանված են 3 հիմնական խմբերի՝ նորաստեղծ (մինչև 12 ամիս գրանցված), սկսնակ (12-24 ամիս գրանցված) և փորձառու (24 ամիս և ավելի): Նշված բաժանման նպատակն է բացահայտել փաստաթղթավորման հիմնախնդիրները՝ կապված գործարարի փորձառության հետ:

**Գծապատկեր 4.**





Հարցման արդյունքները հնարավորություն կտան ի հայտ բերել օրինաչափություններ, կապված գործարարի փորձառության և փաստաթղթավորման մեջ առկա դժվարությունների հետ:

Հարցի նպատակն է բացահայտել աշխատողների ընդհանուր կազմում վարչական աշխատողների և իրացմամբ աշխատողների տեսակարար կշիռը, որի արդյունքում հնարավոր կլինի բացահայտել թե ինչքանով են տնտեսավարող սուբյեկտները կարևորում սպասարկման անձնակազմի նշանակությունը, ինչպես նաև բացահայտել օրինաչափություններ փաստաթղթավորման հիմնախնդիրների առկայության և սպասարկող անձնակազմի քանակական կազմի միջև:


*ստացվել է 482 պատասխան*

**Գծապատկեր 5.**






Ստացված արդյունքը վկայում է տնտեսավարող միավորներում վարչական ապարատի գերծանրաբեռնվածության մասին: Լավագույն պատկերը 30 և ավել աշխատող ունեցող ընկերություններում է, որտեղ վարչական անձնակազմը կազմում է 30%, ինչը 10% - ով մեծ է թույլատրելի առավելագույնից: Ավելի պակաս անձնակազմ ունեցողների մոտ վարչական անձնակազմը տատանվում է 70-100%-ի սահմաններում, և միջինը կազմում է 88%, ինչը բավականին բարձր ցուցանիշ է և վկայում է գործառնական գործունեությունը սպասարկելու պահանջների գերծանրաբեռնվածության, ինչպես նաև գործը նշված պատճառով ոչ ռացիոնալ կազմակերպելու մասին: Նշված երևույթը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ մինչև 5 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտների մոտ աշխատողները հիմնականում համատեղում են տարբեր հաստիքներ: Օրինակ տնօրենը նաև գանձապահ է:












Հարցման արդյունքներից երևում է հստակ կախվածություն վարչական անձնակազմի աշխատանքի վարձատրության չափերի և աշխատողների անձնակազմի մեծության միջև:

Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող սուբյեկտների կողմից հաշվապահական ծառայություններից օգտվողների տեսակարար կշիռը ըստ մարզերի: Հասկանալ նաև վերջիններիս կողմից նշած ծառայություններից օգտվելու դեպքում փաստաթղթավորման հիմնախնդիրները:

ստացվել է 496 պատասխան








Հարցման արդյունքները վկայում են ՀՀ-ում ԳԾՄ կազմակերպությունների ծառայություններից օգտվելու պրակտիկայի թերզարգացվածության մասին: Նշվածն առավել ընդգծված է մարզերում, որտեղ հարցվողների միջինը 2.5%-ն է, որ մշտապես է օգտվում հաշվապահական ծառայություններ մատուցողներից և 9.5%-ն է, որ պարբերաբար է օգտվում նշված ծառայություններից: Ավելի մեծ է նմանատիպ ծառայություններից օգտվող տնտեսավարող միավորների տեսակարար կշիռը Երևանում, որտեղ հարցվողների միջինը 22%-ը մշտապես օգտվում է ԳԾՄ կազմակերպությունների ծառայություններից, իսկ 8%-ը պարբերաբար է օգտվում հաշվապահական ծառայություններ մատուցողներից:

Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող սուբյեկտների կողմից համակարգչային ծրագրերից օգտվելու և փաստաթղթավորման խնդիրների առկայության միջև օրինաչափությունները:

ստացվել է 488 պատասխան


Գծապատկեր 14.




Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարցվողների 2/3-ը չեն օգտվում ՀՀԾ-երից, ինչը անբավարար ցուցանիշ է, արդյունավետ հաշվապահության, այդ թվում՝ նաև փաստաթղթավորման կազմակերպման համար: Հետազոտության հետագա վերլուծությունները կհիմնավորեն նաև, որ ՀՀԾ-երից չօգտվողների մոտ առավել հաճախ են հանդիպում բարդություններ՝ կապված հաշվառման տարբեր կատեգորիաների փաստաթղթավորման հետ:


ստացվել է 168 պատասխան

Գծապատկեր 15.





Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀԾ-երի կիրառումը առավել տարածված է Երևան քաղաքում, որտեղ հարցվողների 65%-ը օգտվում է ՀՀԾ-երից: Այլ է պատկերը մարզերում, որտեղ տնտեսավարող սուբյեկտների փոքր մասն է օգտվում ՀՀԾ-երից, իսկ Արագածոտնի, Տավուշի և Արմավիրի մարզում ընդամենը՝ շուրջ 10%-ը:



**ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

ստացվել է 498 պատասխան


Գծապատկեր 18.



Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող սուբյեկտների մոտ կատարված գործարքի արդյունքում փաստաթուղթ չստանալու ծավալները: Հարցման արդյունքները վկայում են չփաստաթղթավորվող գործարքների անթույլատրելի տոկոսի մասին, որը մեծապես նաև պատճառ է ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման մասով սուգանքների:


ստացվել է 201 պատասխան

Գծապատկեր 19.




Չփաստաթղթավորված գործարքների պատճառները հարցված տնտեսավարող միավորների 20%-ի (7+9+4) կարծիքով պատճառ է հանդիսանում գործարքների փաստաթղթավորման տեխնիկական դժվարությունները, 43%-ը, ըստ տնտեսավարող սուբյեկտների, շրջանառությունը չբացահայտելու ցանկությունն է, իսկ 37%-ը այլ պատճառներն են, որոնց մասով հարցվողները դժվարացել են հստակ պատասխան տալ: Ստացվում է, որ տնտեսությունում կատարվող գործարքների 8.4%-ը կատարվում է սովերում, գործարքը փաստաթղթավորելիս առաջացող տարբեր տեխնիկական խոչընդոտների պատճառով, որոնց թվում են. փաստաթուղթը լրացնելու գիտելիքների բացակայությունը, անհրաժեշտ ռեկվիզիտների չունենալը, կնիքի բացակայությունը, փաստաթղթերի լրացման ժամանակատարությունը, անհրաժեշտ մասնագետի այդ պահին տեղում չլինելը և այլն:

**Գծապատկեր 20.**




Հարցվողների 30%-ը դրական է պատասխանել նշված հարցին: Եթե հաշվի առնենք, որ հարցվողների առնվազն 31%-ը աշխատում են մանրածախ առևտրի ոլորտում, որոնց նշված հարցը չի վերաբերվում (վերջիններին կողմից իրացումը փաստաթղթավորվում է ՀԳՄ-երի միջոցով) ապա մնացած 69% տնտեսավարող սուբյեկտների մոտ փաստաթուղթ վերցնելուց հրաժարվողների տեսակարար կշիռը էական է, որը կազմում է 43.5%:




Հարցման արդյունքները ցույց են տալիս չփաստաթղթավորվող գործարքների բաշխվածությունը: Համաձայն որի հարցվողների 29% - ի մոտ չփաստաթղթավորված ձեռքբերումների տոկոսը իրենց ամբողջ ձեռքբերումների ծավալում անցնում է 41%-ը:

Հարցի նպատակն է բացահայտել չփաստաթղթավորված գործարքների տեսկարար կշիռն ըստ գործունեության հիմնական տեսակների (առևտուր, արտադրություն, ծառայությունների մատուցում)՝ մանրամասնելով ձեռքբերման աղբյուրները, համաձայն հարցում նշված բաշխվածքի:


Գծապատկեր 22.








Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ չփաստաթղթավորված ձեռքբերումների հիմնական աղբյուրը ՀՀ տնտեսությունում առևտրի իրականացման վայրերն են, երկրորդ տեղում գտնվում են անմիջականորեն ներմուծող կազմակերպությունները, որոնք մատակարարման կամ դիստրիբյուցիոն ցանցերի միջոցով իրականացնում են կենտրոնացված և/կամ շրջիկ վաճառքներ և մատակարարումներ: Նշված երկու աղբյուրների կողմից ստացվող ստվերային շրջանառությունը ՀՀ տնտեսությունում կազմում է 82% (45+31+6) ընդհանուր չփաստաթղթավորվող գործարքների ծավալում:



Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող միավորների մոտ, ըստ նրանց գործունեության վաղեմության, ինչ հաճախականությամբ են անց կացվում ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման ճշտության ստուգումները:







Նշված հարցին պատասխանել է հարցվողների 5.2%-ը, ինչն առաջին հերթին վկայում է այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտների մոտ առկա է անվստահության և/կամ վախի էական բաժին՝ ստուգումների և տուգանքների թեմայի վերաբերյալ: Ուստի, տվյալ հարցի արդյունքները կիրառելի չեն կարող լինել հետագա վերլուծության մեջ:

Հարցի նպատակն է բացահայտել, թե որ առաջնային փաստաթղթերի կիրառումն է առավել խնդրահարույց տնտեսավարող սուբյեկտների համար: Գնահատումն իրականացվել է 1-ից 5 գնահատման սանդղակով (առավել խնդրահարույցը -5):

Հարցման արդյունքները ներկայացված են՝

1. ընդհանուր
2. ըստ տնտեսավարող սուբյեկտների ոլորտային բաշխվածքի
3. ըստ գործունեության վաղեմության





Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտների մոտ կեսից ավելին ընդհանրապես չեն կիրառում այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են.


- Անաշխատունակության թերթիկը
- Հանձնման-ընդունման ակտերը
- Առհաշիվ հաշվետվությունները

Հարցվածների ավելի քան 70%-ի կողմից ընդհանրապես չեն կիրառվում.


- Ավտոտրանսպորտային միջոցների ուղեգրերը
- Ճանապարհատրանսպորտային բեռնագրերը
- Հիմնական միջոցների շահագործման ակտերը
- Հիմնական միջոցների դուրսգրման ակտերը
- Գույքագրման ակտերը
- Միակողմանի գնման ակտերը

Հարցվածների 85 %-ի մոտ ընդհանրապես չեն կիրառվում


- Շինարարության կատարողական ակտերը
- Հիմնական միջոցների շահագործման ակտերը
- Հումքի խոտանման, դուրսգրման ակտերը
- Պատրաստի արտադրանքի դուրսգրման ակտերը
- Կրճատ հաշիվ ապրանքագրերը



Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարցված արտադրող տնտեսավարող միավորների ավելի քան 50%-ը ընդհանրապես չեն կիրառում հումքի և արտադրանքի խոտանման և դուրս գրման ակտերը, ինչը արտադրող կազմակերպություններում անհրաժեշտ փաստաթղթավորման բաղկացուցիչ է, որը մեխանիկորեն բերում է հաշվապահական անճշտությունների և համապատասխան տուգանքների:





Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարցված ներմուծող/իրացնող տնտեսավարող միավորների ավելի քան 60%-ի մոտ ընդհանրապես չեն կիրառվում ճանապարհատրանսպորտային բեռնագրերը, ավտոտրանսպորտային միջոցների ուղեգրերը, և չի կատարվում գույքագրում, իսկ 45%-ի մոտ ընդհանրապես չեն կազմվում պահեստի մուտքի և ելքի օրդերներ, ինչը ներմուծող/իրացնող կազմակերպություններում անհրաժեշտ փաստաթղթավորման բաղկացուցիչ է և առանց վերջիններիս կիրառման ընկերություններում մշտապես կան հաշվապահական անճշտություններ և համապատասխան տուգանքների վտանգ:




Հարցման արդյունքները մանրաձախ առևտրի ոլորտում զբաղված կազմակերպություններում ևս ցույց են տալիս որոշակի խնդիրներ: Հարցվողների 85%-ը ընդհանրապես չի կիրառում պահեստի մուտքի և ելքի հաշվառում փաստաթղթերի միջոցով: Իսկ 75%-ը չի կատարում գույքագրումների փաստաթղթավորում:






Հարցի նպատակն է բացահայտել ներկայացված առաջնային փաստաթղթերի կիրառման առումով առավել խոչընդոտող հատկանիշները՝ հատկապես առավել խնդրահարույց փաստաթղթերի համար:

Գծապատկեր 35.





Հարցման արդյունքներով ի հայտ են բերված լրացման առումով առավել անհարմար փաստաթղթերի հիմնական պատճառները: Ըստ դրա.

Լրացման բարդությամբ առավել խնդրահարույց են համարվում.

1. Շինարարության կատարողական ակտը
2. Հիմնական միջոցի շահագործման հանձնման ակտը
3. Հիմնական միջոցի դուրս գրման ակտը
4. Գույքագրման ակտը

Չևավորման տեսանկյունից առավել խնդրահարույց են համարվում.

1. Գրամարկդի մուտքի օրդերը
2. Գրամարկդի ելքի օրդերը
3. Ավտոտրանսպորտային միջոցների ուղեգիրը
4. Ճանապարհատրանսպորտային բեռնագիրը

Մասնագիտական գիտելիքների անհրաժեշտությունից ելնելով՝ առավել խնդրահարույց են համարվում.

1. Շինարարության կատարողական ակտը
2. Անաշխատունակության թերթիկը
3. Հումքի և արտադրանքի խոտանման ակտերը
4. Պատրաստի արտադրանքի դուրսգրման ակտը

Շարադրման լեզվի անհարմարությունից ելնելով՝ առավել խնդրահարույց են համարվում.


1. Շինարարության կատարողական ակտը
2. Հումքի և արտադրանքի խոտանման ակտերը
3. Պատրաստի արտադրանքի դուրսգրման ակտը
4. Անաշխատունակության թերթիկը


Հետագա կիրառման կամ հաշվառման հարմարավետության առումով առավել խնդրահարույց են համարվում.

1. ՀԴՄ կտրոնը
2. Պահեստի մուտքի օրդերը
3. Պահեստի ելքի օրդերը
4. Անաշխատունակության թերթիկը

Հարցի նպատակն է բացահայտել ՀՀ-ում կիրառվող գրանցամատյաններից վարման առումով առավել խնդրահարույց գրանցամատյաններն ու ռեգիստրները, ինչպես նաև բացահայտել կիրառվող տուգանքների և գրանցամատյանների վարման դժվարությունների միջև առկա օրինաչափությունները: Գնահատումն իրականացվել է 1-ից 5 գնահատման սանդղակով (առավել խնդրահարույցը -5):

**Գծապատկեր 37.**







Հարցման արդյունքում ի հայտ են բերվել ՀՀ օրենսդրությամբ պարտադիր վարման ենթակա 2 առավել խնդրահարույց գրանցամատյանները:

Առաջին տեղում է ՀՀ տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցամատյանը (առաքման գիրքը), որի վարումը դրա կիրառողների 17.3%-ի մոտ առաջացնում է անհարմարություններ:

Երկրորդ տեղում է ՀՀ տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցամատյանը (հասույթի գիրքը), որի վարումը դրա կիրառողների 16.2%-ի մոտ առաջացնում է անհարմարություններ:

Հարցի նպատակն է բացահայտել թե ՀՀ տարածքում կիրառվող գրանցամատյաններից վարման առումով առավել խնդրահարույց գրանցամատյանների կազմում որ հատկանիշներն են առավել դժվարացնում դրանց վարումը, ինչպես նաև հասկանալ օրինաչափություններ կիրառվող տուգանքների և գրանցամատյանների վարման դժվարությունների միջև:



Լրացման առումով առավել խնդրահարույց երկու պարտադիր լրացման գրանցամատյաններում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

առաքման գրքի մասով՝

1. կիրառման անհարմարությունը
2. լրացման բարդությունը


հասույթի գրքի մասով՝



1. լրացման բարդությունը
2. կիրառման անհարմարությունը

**ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Հարցի նպատակն է բացահայտել թե հաշիվ ապրանքագրերի ճշգրտումների անհրաժեշտության դեպքում ծանոթ են արդյոք տնտեսավարող միավորները գործող ընթացակարգերին թե ոչ: Նշված հանգամանքը բացահայտված է ինչպես Երևան քաղաքի և մարզերի տնտեսավարող միավորների համար, այնպես էլ՝ ըստ գործունեության վաղեմության:


*Գծապատկեր 41.*






Հարցման արդյունքում պարզ է դառնում, որ նորաստեղծ ընկերություններում հաշիվ ապրանքագրերի ճշգրտումները կատարվում են մոտ կրկնակի անգամ ավելի հաճախ, քան սկսնակ տնտեսավարող սուբյեկտներում և մոտ 50% ավելի հաճախ, քան փորձառուների մոտ, ինչը վկայում է սկսնակ գործարարների մոտ փաստաթղթավորման, և/կամ բիզնեսի կազմակերպման անհրաժեշտ գիտելիքների և փորձի բացակայության մասին:






Հարցման արդյունքները վկայում են տնտեսավարող սուբյեկտների մոտ սխալ լրացված հաշիվ ապրանքագրերի ճշգրտման մեխանիզմների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների մոտ գիտելիքների բացակայության մասին: Այսպես, միայն Երևան քաղաքի հարցվողների 8%-ը և Արարատ մարզի հարցվողների մոտ 12%-ն է կիրառում հաշիվ ապրանքագրերի ճշգրտման օրենքով սահմանված մեխանիզմներ, մնացածը մեծամասամբ լրացնում են նոր հաշիվ ապրանքագիր՝ հնի փոխարեն, ինչը հղի է հարկերի մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի պահանջների խախտման մասով տուգանվելու վտանգով, կամ տալիս են նոր հաշիվ՝ սխալի տարբերության մասով:


Հարցի նպատակն է հասկանալ տնտեսավարող սուբյեկտների տրամադրվածությունը ենթադրյալ նորարարությունների նկատմամբ, որը հնարավորություն կտա հաշվառման ընդունել տվյալ տիպի փաստաթղթերը: Ընդ որում, հետաքրքիր է նշված տեղեկատվությունը ունենալ ըստ մարզերի և ըստ գործունեության ոլորտների:



Հարցվողների 59%-ը կողմ են արտահայտվել հաշիվ ապրանքագրերի հեռահաղորդակցության միջոցներով ստանալու/ուղարկելու մեխանիզմների կիրառմանը: Ինչը վկայում է այն մասին, որ ընկերություններում փաստաթղթերը ֆիզիկապես տեղափոխելու հետ կապված առկա են որոշակի խնդիրներ:





Առավել մեծ է հեռահաղորդակցության միջոցներով հաշիվ ապրանքագրերի ուղարկել/ստանալու վերաբերյալ դրական դիրքորոշում ունեցող տնտեսավարողների քանակը Երևան քաղաքում, Արագածոտնի, Արմավիրի և Սյունիքի մարզերում:



Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կապված տնտեսավարող սուբյեկտի գրանցման վաղեմությունից, նորաստեղծ կազմակերպությունները ավելի վաղ գրանցվածների համեմատությանը ավելի դրական են արտահայտվել նորարարությունների վերաբերյալ: Նշվածը բացատրվում է այն հանգամանքով, որ նոր բիզնեսի համար առավել կարևոր է հաշիվ ապրանքագրերի ֆիզիկապես տեղափոխման համար լրացուցիչ ժամանակի կամ հաստիքի խնայողությունը քան ավելի վաղ գրանցված գործարարի համար:


Հարցի նպատակն է հասկանալ տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր տրամադրվածությունն ապրանքափոխանակության գործարքների փաստաթղթավորման նկատմամբ, ընդ որում, անհրաժեշտ է հասկանալ տվյալ մոտեցումներն ըստ գործունեության տարբեր տեսակների:





Հարցման արդյունքներով կիրառողների մոտավորապես կեսի համար ապրանքափոխանակության գործարքների փաստաթղթավորումը անհարմար է, ընդ որում, ծառայությունների (75%), արտադրության (60%) և ներմուծող/իրացնողների (50%) մոտ նշված խնդիրներն առավել հատկանշական են, քան մանրածախ առևտրի (30%) բնագավառում: Պատճառը կայանում է նրանում, որ մանրածախ առևտրի բնագավառում ապրանքափոխանակության գործարքները ավելի հազվադեպ են կատարվում:


Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող միավորների իրազեկվածության մակարդակը էլեկտրոնային ստորագրության կիրառման համակարգի վերաբերյալ, ընդ որում, այս տեղեկատվությունը հետազոտությունում բերված է նաև ըստ մարզերի:



Հարցման արդյունքները վկայում են, որ էլեկտրոնային ստորագրության կիրառման վերաբերյալ տեղեկությունները տնտեսավարող սուբյեկտների մոտ գտնվում է անբավարար ցածր մակարդակում, նշվածը առավել ցայտուն է մարզերում:

ստացվել է 496 պատասխան


Գծապատկեր 51.



Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող միավորների կողմից ապրանքանյութական արժեքների և ծառայությունների ձեռքբերման ժամանակ էլեկտրոնային քարտերով վճարումներ կատարելու հարմարության մակարդակը: Կարևոր է նաև հարցի արդյունքում ստացված պատկերն ըստ մարզերի և ըստ գործունեության ոլորտների:

ստացվել է 492 պատասխան


Գծապատկեր 52.



Հարցվողների 54%-ի համար էլ.քարտերի միջոցով վճարումների կատարումը հարմար է, ինչը վկայում է ՀՀ-ում քարտային համակարգի տարածման բավարար մակարդակի մասին:

ստացվել է 494 պատասխան


Գծապատկեր 53.



Այնուամենայնիվ, որոշ մարզերում էլ.քարտերով վճարումների կատարման վերաբերյալ ցածր գնահատականը վկայում է նշված համակարգերի թերզարգացվածության մասին: Ետնապահներն են Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերը:

ստացվել է 494 պատասխան


Գծապատկեր 54.




Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող սուբյեկտների կողմից փաստաթղթավորման իրականացման ժամանակ կնիքի պարտադիր պահանջի վերացման վերաբերյալ դիրքորոշումը:

ստացվել է 496 պատասխան

Գծապատկեր 55.



Գծապատկեր 56.




Հետաքրքիր է, որ, չնայած, միջազգային պրակտիկայում կնիքի պարտադիր պահանջի վերացման միտումներին, ըստ հարցման արդյունքների հարցվողների ընդամենը 42%-ն են կողմ արտահայտվել առաջնային հաշվարկային և վճարային փաստաթղթերից կնիքի պարտադիր կիրառման պահանջի վերացման վերաբերյալ հարցին:

Հարցի նպատակն է բացահայտել տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքանյութական արժեքների մուտքի-ելքի հաշվառման մոտեցումներն, ընդ որում,


արդյունքները բերված են նաև ըստ գործունեության ոլորտների: Բացի այդ, այստեղից բացահայտվում են նաև ընկերությունում զբաղված հաշվապահների քանակի և պահեստի հաշվառման առկայության միջև օրինաչափություններ: Հետաքրքիր են նաև պահեստի փաստաթղթավորման առկայության և ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման համար կիրառվող տուգանքների միջև օրինաչափությունները:

ստացվել է 497 պատասխան

Գծապատկեր 57.



Գծապատկեր 58.




Ըստ հարցման արդյունքների հարցվողների 71%-ի կողմից չի վարվում պահեստի հաշվառման գիրք: Եթե հաշվի առնենք, որ հարցվողների 27%-ը ներկայացնում են ծառայությունների ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտները, որոնց համար նշված հաշվառման անհրաժեշտությունը որպես կանոն բացակայում է, ապա ակնհայտ է, որ



հարցվողների 52%-ը չի կիրառում տվյալ տիպի հաշվառման մոտեցումը, ինչը հանդիսանում է ձեռնարկատիրական առարկաների գրանցման խախտումների համար տուգանքների ամենատարածված պատճառներից մեկը:

ստացվել է 138 պատասխան


Գծապատկեր 59.






Հարցման հարդյունքները ցույց են տալիս, որ պահեստի գիրք վարողների 58%-ի մոտ տվյալ պարտականությունը դրված է ընկերության գլխավոր հաշվապահի կամ հաշվապահի վրա, ինչը դուրս է հաշվապահական հաշվառման բուն պարտականություններից, և հաճախ հանգեցնում է գերբեռնվածության և հետևաբար՝ սխալների ու տուգանքների:

ստացվել է 122 պատասխան


Գծապատկեր 60.












Գծապատկեր 65.



Հարցման արդյունքները վկայում են, որ հարցվողների 77%-ի կողմից վարվում են դրամարկղի մուտքի օրդերները, իսկ եթե հաշվի առնենք, որ հարցվողների 27%-ը ԱԶ-ներ են, որոնց կողմից դրամարկղի վարումը պարտադիր չէ, ապա հետևում է, որ դրամարկղի մուտքի օրդերների կիրառումը գրեթե 100% տարածում ունի, ինչն իր հերթին վկայում է այն մասին, որ նշված փաստաթուղթը համեմատաբար պարզ է լրացման համար և հարմար կիրառելիության առումով: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հարցվողների մոտ 60%-ի մոտ դրամարկղի մուտքի օրդերները լրացվում են ընկերության գլխավոր հաշվապահի կամ հաշվապահի կողմից: Ինչը դուրս է հաշվապահական հաշվառման բուն պարտականություններից, և հաճախ հանգեցնում է գերբեռնվածության և հետևաբար՝ սխալների ու տուգանքների:



Հարց 25-ի և 26-ի նպատակն է բացահայտել թե տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվում է արդյոք դամարկդի առաջնային փաստաթղթերի փաստաթղթավորում թե ոչ: Ընդ որում, տեղեկատվությունը ներկայացված է նաև ըստ գործունեության տեսակների:




Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարցվողների 76%-ի կողմից վարվում են դրամարկղի մուտքի օրդերները, իսկ եթե հաշվի առնենք, որ հարցվողների 27%-ը ԱԶ-ներ են, որոնց կողմից դրամարկղի վարումը պարտադիր չէ, ապա հետևում է, որ դրամարկղի

մուտքի օրդերների կիրառումը գրեթե 92% տարածում ունի, ինչն իր հերթին վկայում է այն մասին, որ նշված փաստաթուղթը համեմատաբար պարզ է լրացման համար և հարմար կիրառելիության առումով:


ստացվել է 496 պատասխան

Գծապատկեր 71.



ստացվել է 374 պատասխան

Գծապատկեր 72.




Այստեղ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հարցվողների մեծամասնության մոտ դրամարկղի ելքի օրդերները դուրս են գրվում ընկերության գլխավոր հաշվապահի կամ հաշվապահի կողմից: Հատկանշական է, որ այս առումով առավել ծանրաբեռնված են

ծառայությունների և արտադրության ոլորտների հաշվապահները, ինչը դուրս է հաշվապահական հաշվառման բուն պարտականություններից, և հաճախ հանգեցնում է գերբեռնվածության և հետևաբար՝ սխալների ու տուգանքների հատկապես նշված ոլորտներում գործող տնտեսավարողների մոտ:


ստացվել է 496 պատասխան

Գծապատկեր 73.



ստացվել է 149 պատասխան

Գծապատկեր 74.




Հարցման արդյունքները վկայում են, որ հարցվողների 30%-ի կողմից վարվում են պահեստի մուտքի օրդերները, ինչը վկայում է այն մասին, որ նշված փաստաթղթի կիրառումը համեմատաբար ավելի խնդրահարույց է տնտեսավարող սուբյեկտների համար քան դրամարկդի մուտքի օրդերի վարումը: Ընդ որում, պահեստի մուտքի օրդերների դուրսգրմամբ հարցվողների 60.4%-ի մոտ զբաղվում է հաշվապահը, կամ գլխավոր հաշվապահը, որը

իրականում պահեստապետի գործառույթ է և հաշվապահի համար առաջացնում է գերբեռնվածություն:

Հարց 27-ի և 28-ի նպատակն է բացահայտել, թե տնտեսավարող սուբյեկտների կողմից արդյոք իրականացվում է պահեստի մուտքերի և ելքերի առաջնային փաստաթղթավորում, թե ոչ:

*ստացվել է 493 պատասխան*


**Գծապատկեր 75.**



Հարցման արդյունքները վկայում են, որ հարցվողների 71%-ի կողմից չեն վարվում պահեստի ելքի օրդերներն, ինչը վկայում է այն մասին, որ նշված փաստաթղթի կիրառումը համեմատաբար խնդրահարույց է տնտեսավարող սուբյեկտների համար:

*ստացվել է 142 պատասխան*

**Գծապատկեր 76.**



Հարցման արդյունքներից հետևում է, որ հարցվող տնտեսավարող սուբյեկտների 61.5%-ի մոտ պահեստի ելքի օրդերների հաշվառումը իրականացվում է հաշվապահի կամ գլխավոր




հաշվապահի կողմի, ինչը դուրս է հաշվապահական հաշվառման բուն պարտականություններից, և հաճախ հանգեցնում է գերբեռնվածության և հետևաբար՝ սխալների ու տուգանքների:


Հարցի նպատակն է հասկանալ տնտեսավարող սուբյեկտների մոտ ամսական որքան ժամանակ է ծախսվում պահեստի փաստաթղթավորման վրա՝ ըստ գործունեության տարբեր տեսակների, և ինչ օրինաչափություններ կան ծախսվող ժամանակի և ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման համար կիրառված տուգանքների միջև:

ստացվել է 168 պատասխան

Գծապատկեր 77.




Գծապատկեր 78.




Հարցման արդյունքները վկայում են արտադրության և ներմուծման/իրացման ոլորտներում պահեստի փաստաթղթավորման վրա գրեթե կրկնակի ծանրաբեռնվածության

մասին՝ մնացած ոլորտների համեմատ, ինչը կարելի է դիտել որպես օրինաչափություն, քանի որ նշված ոլորտներում պահեստի հետ կապված գործառնությունների ծավալը էականորեն գերազանցում է մնացած ոլորտների նմանատիպ գործարքների ծավալը:

**Գծապատկեր 79.**




**Գծապատկեր 80.**




Հարցման արդյունքը ներկայացված է ըստ հաշվապահությունում ներգրավված մեկ աշխատողի հաշվով ծախսվող ժամանակի:

Հարցի նպատակն է հասկանալ արդյոք ընկերությունում առկա է մասնագիտացված հաստիք՝ հաշիվ ապրանքագրերի դուրս գրման համար, թե հաշիվ ապրանքագրերը դուրս են գրվում տարբեր մասնագետների կողմից: Հարցի միջոցով երևում է նաև, թե առկա են արդյոք օրինաչափություններ ՀՀԾ-եր կիրառող և չկիրառող տնտեսավարողների կողմից նշված պարտականություններն այս կամ այն հաստիքի վրա դնելու առումով:



Հարցման արդյունքները վկայում են, որ հարցվող տնտեսավարող սուբյեկտների 68.4%-ի մոտ հաշիվ ապրանքագրերի դուրսգրումը իրականացվում է հաշվապահի կամ գլխավոր հաշվապահի կողմից, իսկ եթե հաշվի առնենք, որ հարցվողների մոտ 31%-ը մանրածախ առևտրի ոլորտն են ներկայացնում, ուր հաշիվ ապրանքագրերի դուրս գրումը առավել քիչ է իրականացվում, ապա կարելի է եզրակացնել, որ կազմակերպությունների 90%-ում հաշիվ ապրանքագրերի դուրսգրումը դրված է հաշվապահների վրա:

Գծայատկեր 82.




Հետաքրքրական է, որ համակարգչային մասնագիտացված ծրագրեր օգտագործող կազմակերպություններում հաշիվ ապրանքագրերի դուրսգրումը գրեթե 100% դրված է գանձապահների վրա, եթե տնտեսավարող սուբյեկտի մոտ կա այդպիսի հաստիք: Նշված

հանգամանքը վկայում է այն մասին, որ համակարգչային ծրագրերի կիրառումը բարձրացնում է աշխատանքի բաժանման արդյունքում արդյունավետությունը, ինչպես նաև վերացնում է փաստաթղթի լրացման բարդության, կամ գիտելիքների բացակայության, կամ տեխնիկական այլ տիպի խոչընդոտների պատճառով հաշիվ ապրանքագրերի լրացման տեխնիկական բնույթի պարտականությունը հաշվապահի վրա դնելու պահանջը:

Հարցի նպատակն է բացահայտել արդյոք ընկերությունում առկա է մասնագիտացված հաստիք, որը զբաղվում է հաշիվ ապրանքագրերի հաշվառմամբ, թե հաշվառումն իրականացնում է ընկերության հաշվապահը:



ստացվել է 436 պատասխան

Գծապատկեր 83.



Հարցման արդյունքները ևս վկայում են այն մասին, որ ստացված հաշիվ ապրանքագրերի հաշվառման պարտականությունը գերակայող մեծամասնությամբ դրված է հաշվապահների վրա (70.2%), ինչը առավելապես հանդիսանում ապրանքների ուղղակի վաճառքի վայրում (պահեստ, մեծածախ կամ մանրածախ առևտրի վայր) մասնագիտացված հաստիքի պարտականությունները:

Նշված տեղեկատվությունը անհրաժեշտ է ունենալ ըստ գործունեության տեսակների: Հարցի արդյունքները հնարավորություն կտան պատկերացնել տվյալ տիպի գործունեության համար իրացման գործընթացի փաստաթղթավորման մեջ առկա բարդությունները:




Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ նշված տիպի գործունեություն իրականացնողների ավելի քան 50%-ի մոտ առկա են տարբեր տիպի խոչընդոտներ, կապված պահեստներից, մասնաճյուղերից, մանրածախ առևտրի կետերից, կամ նման վայրերից հաշիվ ապրանքագրերի, դրամարկղի մուտքի օրդերի դուրս գրման, դրանց համարակալման և նման այլ խնդիրների հետ, ընդ որում, նշված հիմնախնդիրները առավել սուր են դրված արտադրողների և ներմուծող/իրացնողների մոտ:

Հարցի նպատակն է բացահայտել դեբիտորների և կրեդիտորների հաշվառման աշխատատարությունը: Տվյալ հարցման արդյունքները ներկայացված են նաև ըստ գործունեության տեսակների: Բացի այդ, հարցման արդյունքները բացահայտված են նաև բացառապես փորձառու տնտեսավարող սուբյեկտների մասով:


ստացվել է 378 պատասխան

Գծապատկեր 86.



ստացվել է 378 պատասխան

Գծապատկեր 87.




Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ դեբիտոր/կրեդիտորների հաշվառումը առավել աշխատատար է արտադրության և ներմուծման/հրացման ոլորտում զբաղված տնտեսավարողների մոտ: Միաժամանակ, ներկայացված է միջին աշխատատարությունը տվյալ տիպի հաշվառման ամար:

Ստորև բերված հարցի նպատակն է պարզել թե պատրաստի արտադրանքի հաշվառմանը զբաղվող հաստիքը հաշվապահն է, թե ոչ: Այս հարցման արդյունքը էական է ներկայացնել միայն արտադրող կազմակերպությունների շրջանակներում:


ստացվել է 289 պատասխան

Գծապատկեր 88.




Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարցվողների 58.3%-ի մոտ պատրաստի արտադրանքի ինքնարժեքի հաշվառմանը զբաղվում է հաշվապահը, իսկ եթե հաշվի առնենք, որ հարցվողների ընդամենը 20%-ն է, որ ներկայացնում է արտադրությունը և 27%-ն է, որ ներկայացնում է ծառայությունների ոլորտը՝ ընդամենը 47%, այսինքն այն զանգվածը, որը առհասարակ կարող է ունենալ արտադրական գործընթաց, ապա ստացվում է, որ հարցվողների 100%-ի մոտ պատրաստի արտադրանքի ինքնարժեքի հաշվառմանը զբաղվում են հաշվապահները:

Տվյալ հարցի նպատակն է բացահայտել պատրաստի արտադրանքի փաստաթղթավորման և հաշվառման համար անհաժեշտ աշխատատարությունը: Տվյալ հարցման արդյունքները բերված են միայն արտադրողների համար:




Հարցման արդյունքները անհրաժեշտ են հետազայում փաստաթղթավորման ընդհանուր աշխատատարության հաշվարկներն իրականացնելիս:

Հարցի նպատակն է հասկանալ թե ինչ մաս են կազմում գործավարձային եղանակով վարձատրող տնտեսավարող սուբյեկտները ընդհանուրում՝ ըստ ոլորտների:




Հարցման արդյունքներից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտների 76%-ը կիրառում է աշխատավարձի վարձատրության հաստիքային ձևը, մինչդեռ հայտնի է, որ աշխատանքի վարձատրության առավել արդյունավետ մոտեցումն է գործավարձային եղանակը, որը բարձրացնում է աշխատողների մոտիվացիան և ուղղակի կամ անուղղակի կապված է աշխատանքի արդյունքի հետ:






Հարցման արդյունքներից հետևում է, որ արտադրության ոլորտում, ուր առավել նպատակահարմար է աշխատանքի վարձատրության գործավարձային մոտեցումը այն կիրառվում է ընդամենը հարցվողների 45%-ի մոտ:


Ստորև բերված հարցի նպատակն է բացահայտել աշխատավարձի վարձատրության ձևակերպումներին վերաբերող հաշվարկների և փաստաթղթավորման վրա ծախսվող ժամանակը: Հարցի արդյունքները ներկայացված են նաև ըստ գործունեության ոլորտների:





Հարցման արդյունքները ցույց են տալիս ուղղակի կախվածություն աշխատավարձի հաշվարկման հաստիքային կամ գործավարձային մոտեցումների և աշխատավարձի հաշվարկի վրա ծախսվող ժամանակի միջև: Մասնավորապես, բոլոր գործունեության ոլորտներում աշխատավարձի հաշվարկման գործավարձային մոտեցումը պահանջում է 5-15 անգամ ավել ժամանակ, քան հաստիքային եղանակի դեպքում: Հենց պահանջվող ժամանակի մեծությունն է, որ մեր կարծիքով չի թույլատրում, որպեսզի աշխատավարձի վարձատրության առավել առաջադեմ և բիզնեսի տեսանկյունից առավել արդյունավետ մոտեցումը տարածվի հայրենական գործարար միջավայրում:


Ստորև բերված պատկերը տալիս է տեղեկատվություն, որը թույլ է տալիս եզրակացնել, թե համատեղվում է արդյոք հաշվապահի կողմից աշխատանքային պայմանագրերի պատրաստման պարտականությունը թե ոչ:



Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսավարող սուբյեկտների 52.2%-ի մոտ աշխատանքային պայմանագրերը պատրաստում են հաշվապահները, ինչը դուրս է իրենց բուն պարտականություններից, բերում է գերբեռնվածության և լրացուցիչ սխալների:


ստացվել է 440 պատասխան

Գծապատկեր 95.








ստացվել է 440 պատասխան

Գծապատկեր 96.




Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալական վճարների հաշվետվությունների պատրաստման և հանձնման վրա ամսական ծախսվող ժամանակը ըստ էության ռացիոնալ մեծություն է և ժամանակատարության առումով գտնվում է բավարար մակարդակում:






Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարկային հաշվետվությունների պատրաստման համար մյուս ոլորտներում գործող տնտեսավարողների համեմատությամբ ավելի շատ ժամանակ են ծախսում արտադրության ոլորտում զբաղված տնտեսավարող սուբյեկտները:




Գծապատկեր 103.




Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ վիճակագրական հաշվետվությունների կազմման նպատակով ծախսվող ժամանակի տեսանկյունից առավել ծանրաբեռնված են ներմուծման/հրացման և արտադրության ոլորտները, որոնց 18-20%-ը հաշվետվությունների կազմման համար տրամադրում է ամսական ավելի քան 3 ժամ, իսկ 12-15%-ը ծախսում է ավելի քան 10 ժամ: Հարցման արդյունքները հետազայում կօգտագործվեն հաշվապահների ընդհանուր ծանրաբեռնվածության հաշվարկներում:

Ստորև բերված հարցի նպատակն է պարզել, թե համատեղվում է արդյոք հաշվապահի կողմից առաքման գրքի լրացման պարտականությունը թե ոչ:




Հարցվողների 70%-ի կողմից ստացվել է պատասխան, որ նշված գրանցամատյանները լրացվում են հաշվապահների կողմից, ինչը ևս վկայում է հաշվապահների գերծանրաբեռնվածության մասին: Հաշվապահների կողմից նշված գրանցամատյանների վարումը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով:

Առաջինն այն է, որ նշված գրանցամատյանների վարման կանոնների խախտման համար սահմանված են բավականին ծանր տուգանքներ: Երկրորդը, որ շատ կազմակերպություններում, որտեղ առկա է ստվերային շրջանառություն, հարկային “ստվերի” թաքցման գործընթացը կարգավորվում է ուղղակի հաշվապահի կողմից, իսկ նշված գրանցամատյանները գործիք են հարկային մարմինների կողմից ստվերային շրջանառությունները բացահայտելու համար, և բնականաբար, հաշվապահի կողմից տվյալ գրանցամատյանների վարմանն առավել մեծ ուշադրություն է դարձվում՝ չգրանցված ապրանքների հոսքերը տարբեր մեխանիզմներով թաքցնելու նկատառումներից ելնելով:




Գծապատկեր 106.



Հարցման արդյունքներից հետևում է, որ գրանցամատյանների վարումը բավականին ժամանակատար գործընթաց է և քանի որ մեծամասամբ վարվում է հաշվապահների կողմից, իր հերթին առաջացնում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

Բացի վերը բերվածը, անհրաժեշտ է հասկանալ թե համատեղվում է արդյոք հաշվապահի կողմից տվյալ պարտականությունը թե ոչ, ինչի վերաբերյալ պատկերը բերված է ստորև ներկայացված գծանկարում:







Հարցվողների 49%-ը պատասխանել են, որ նշված գրանցամատյանները լրացվում են հաշվապահների կողմից, իսկ եթե հաշվի առնենք, որ հարցվողների 47%-ը ներկայացնում է ծառայությունների և արտադրության ոլորտը, որոնք նշված գրանցամատյանները չեն վարում, ապա կստացվի, որ հարցված տնտեսավարող սուբյեկտների 92.5%-ի մոտ վարումը կատարում են հաշվապահները, ինչը ևս վկայում է հաշվապահների գերծանրաբեռնվածության մասին: Հաշվապահների կողմից նշված գրանցամատյանների վարումը պայմանավորված է նույն երկու հիմնական հանգամանքով, ինչ նշվեց առաքման գրքերի դեպքում:

Առաջինն այն է, որ նշված գրանցամատյանների վարման կանոնների խախտման համար սահմանված են բավականին ծանր տուգանքներ:

Երկրորդը, որ շատ կազմակերպություններում, որտեղ առկա է սովերային շրջանառություն, հարկային “սովերի” թաքցման գործընթացը կարգավորվում է ուղղակի հաշվապահի կողմից, իսկ նշված գրանցամատյանները գործիք են հարկային մարմինների կողմից սովերային շրջանառությունները բացահայտելու համար, և բնականաբար, հաշվապահի կողմից տվյալ գրանցամատյանների վարմանը առավել մեծ ուշադրություն է դարձվում՝ չգրանցված ապրանքների հոսքերը տարբեր մեխանիզմներով թաքցնելու նկատառումներից ելնելով:




Գծապատկեր 109.




Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ գրանցամատյանների վարումը բավականին ժամանակատար գործընթաց է, և քանի որ մեծամասամբ վարվում է հաշվապահների կողմից ևս իր հերթին բերում է լրացուցիչ ծանրաբեռնվածության:

Ամփոփելով 29,33,35,37 և 39-43 հարցերի արդյունքում արված վերլուծությունը՝ կարելի է դուրս բերել վերը թվարկված գրանցամատյանների լրացման համար ծախսվող ընդհանուր ժամանակի և կիրառվող տուգանքների միջև օրինաչափությունները, ինչպես նաև փաստաթղթավորման նպատակով ծախսվող աշխատաժամանակի կախվածությունը հաշվապահությունում աշխատողների քանակից:



Հարցման արդյունքներով դուրս է բերված հաշվառման ընթացակարգերում փաստաթղթավորման հիմնական ուղղությունների վրա ծախսվող ժամանակը ամսական կտրվածքով: Վերը ներկայացված գծանկարում հարցվողների 19%-ի մոտ փաստաթղթավորման վրա ծախսվում է 51-100 ժամ, իսկ հարցվողների 26%-ի մոտ՝ 101 ժամից ավելի: Նշված ցուցանիշները վկայում են այն մասին, որ փաստաթղթավորման վրա ծախսվող աշխատաժամանակը տնտեսավարող սուբյեկտների համար առաջացնում է բավականին մեծ ճնշում:

Գծապատկեր 111.




Հարցման արդյունքում ի հայտ բերված օրինաչափությունը ցույց է տալիս ընկերությունների հաշվապահությունում զբաղված աշխատողների և փաստաթղթավորման վրա ծախսվող ժամանակի միջև ուղիղ համեմատական կապ: Առաջին հայացքից թվում է, թե հաշվապահությունում ավելի փոքր քանակի հաստիքների ներգրավումը անպայման կբերի աշխատանքի ծանրաբեռնվածության և փաստաթղթավորման վրա կծախսվի ավելի շատ աշխատաժամանակ, սակայն՝ օրինաչափությունը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով.


1. Որպես կանոն հաշվապահությունում ավելի քիչ մասնագետների ներգրավումը հնարավոր է դառնում մասնագիտացված համակարգչային ծրագրերի կիրառման պայմաններում, ինչը և բացատրում է փաստաթղթավորման վրա ծախսվող ժամանակի խնայողությունը:
2. Հաշվապահությունում ավելի քիչ մասնագետների ներգրավումը հնարավոր է նաև հաշվառման տարբեր հանգույցներում հաշվետարական պարտականությունների բաշխման արդյունքում, ինչը առավել տարածված է փոքր քանակակազմ ունեցող ընկերությունում, որտեղ պահեստապետը համատեղում է պահեստի հաշվետարի հաստիքը, տնօրենը՝ գանձապահին և այլ, որի արդյունքում հաշվապահի կողմից ծախսվող ժամանակը տնտեսվում է:

*ստացվել է 500 պատասխան*


**Գծապատկեր 112.**



Հարցման արդյունքները բացահայտում են ԱՁ-ների կողմից փաստաթղթավորման վրա ծախսվող ժամանակի կրկնակի խնայողության մասին, ի համեմատություն ԻԱ կողմից ծախսվող ժամանակի, ինչը բացատրվում է առաջին հերթին նրանով, որ դրամարկղի գրքի և տնտեսության դրամարկղային վարման պահանջը չի տարածվում ԱՁ-ների վրա, և երկրորդ, որ ԱՁ-ները հիմնականում ներկայացնում են միկրոձեռնարկություններ:




Հարցման արդյունքները վկայում են, որ փաստաթղթավորման վարման առումով ամենաժամանակատար ոլորտը արտադրությունն է, որտեղ փաստաթղթավորման համար ծախսվում է ամսական 151 ժամից ավելի հարցվողների 34%-ի մոտ, 76-150 ժամ` հարցվողների 21%-ի մոտ: Նշված ցուցանիշը բավականին բարձր է և խոսում է արտադրության նկատմամբ առկա փաստաթղթային պահանջների գերծանրաբեռնվածության մասին: Ուշադրության է արժանի, որ 2008թ.-ին արտադրողները դուրս են մնացել պարզեցված հարկի դաշտում գործելու հնարավորությունից, որտեղ փաստաթղթավորման ժամանակատարությունն ավելի փոքր է:




Հարցման արդյունքները բացահայտում են փաստաթղթավորման ժամանակատարության աճն ըստ հարկման ռեժիմների: Այսպես, առավել բարենպաստ հարկման ռեժիմը պարզեցված հարկի դաշտն է, երկրորդը՝ հաստատագրված հարկով աշխատողներինը և առավել ժամանակատարը՝ ընդհանուր հարկման ռեժիմն է:

ստացվել է 377 պատասխան

Գծապատկեր 115.



Հարցման արդյունքներով ներկայացված է մեկ հաշվապահին բաժին ընկնող ամսական կտրվածքով ծախսվող ժամանակը, համաձայն որի հարցվողների 15%-ի հաշվապահները ծախսում են ամսական 51-70 ժամ, իսկ հարցվողների 27%-ի մոտ՝ փաստաթղթավորման վրա ծախսվում է ավելի քան 76 ժամ: Վերջինս նշանակում է, որ հաշվապահությունում զբաղված մեկ աշխատողը օրական փաստաթղթավորման վրա ծախսում է ավելի քան 3.2 ժամ, ինչը կազմում է լրիվ դրույքով աշխատող մասնագետի օրվա աշխատաժամանակի 40%-ը:




Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ փաստաթղթավորման տեսանկյունից մեկ աշխատողի վրա ընկնող ժամանակի ծախսատարության առումով առաջին տեղում է գտնվում արտադրության ոլորտը, որտեղ հաշվապահների 36%-ի կողմից փաստաթղթավորմանը օրական տրամադրվում է ավելի քան 4.2 ժամ, որը կազմում է լրիվ դրույքով աշխատող հաշվապահի աշխատաժամանակի 52%-ը: Բնականաբար, հաշվապահը, որի արդյունավետ ժամանակի կեսից ավելին ծախսվում է փաստաթղթավորման վրա, ավելի քիչ ժամանակ կտրամադրի իր բուն պարտականությունների՝ կազմակերպությունից ֆինանսական ակնկալիքներ ունեցող անձանց՝ կազմակերպության տնտեսական միջոցների և դրանց առաջացման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը: Իսկ վերջին գործառույթի թերացումը հանգեցնում է կառավարչական որոշումների անարդյունավետության, հարկային տուգանքների, ինչպես նաև ֆինանսական որոշումների անարդյունավետության:

**5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համաձայն տեխնիկական առջադրանքի հետազոտության արդյունքը պետք է արտահայտվի օրենսդրական փոփոխությունների և վարչարարական բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմամբ, որոնք կբխեն հետազոտության վերլուծությունից և ուղղված կլինեն փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության ի հայտ բերված խնդիրների լուծման հնարավոր տարբերակների մշակմանը:

Հետազոտության վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք խորքային հիմնախնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ կարելի է դասակարգել ըստ ստորև ներկայացված առաջնահերթությունների.


1. Հանրապետությունում կատարվող ապրանքների և/կամ ծառայությունների ձեռք բերման գործարքների էական տոկոս (20%) կատարվում է առանց փաստաթղթավորման, որի մեջ զգալի մաս է կազմում փաստաթղթերի լրացման նկատմամբ կիրառվող պարտադիր տեխնիկական պահանջների (լրացման բարդություն, մասնագիտական գիտելիքների պակաս, կնիքի բացակայություն, փաստաթղթի լրացման ժամանակատարություն և այլն) հետ կապված խնդիրները,



2. կազմակերպություններում և անհատ ձեռնարկատերերի մոտ ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը չվերաբերվող տնտեսական իրադարձությունների էական մաս կատարվում է առանց փաստաթղթավորման, որի պատճառը իրական շրջանառությունը չբացահայտելու հակվածությունն է,



**Ձեր կողմից ձեռք բերվող ապրանքների/ծառայությունների քանի տոկոսն է կատարվում առանց հիմնավորող փաստաթղթերի (և/կամ ՀԴՄ կարոններով)**



3. տնտեսավարող սուբյեկտների մոտ փաստաթղթավորման պարտականությունները մեծամասամբ դրված են հաշվապահների վրա, բավարար մակարդակում չի գտնվում տնտեսավարող սուբյեկտների կողմից մասնագիտացված համակարգչային ծրագրերի կիրառումը փաստաթղթավորման կազմակերպման գործընթացում, տնտեսավարող սուբյեկտների մեծամասնությունը չի օգտվում ԳԾՄ կազմակերպությունների ծառայություններից,
4. փաստաթղթավորման ժամանակատարության և բարդության առումով հիմնախնդիրներն առավել սուր են արտահայտված հարկման ընդհանուր դաշտում գործող տնտեսավարող սուբյեկտների մոտ, և հիմնականում փաստաթղթավորման պահանջներով ծանրաբեռնված են արտադրության ոլորտում զբաղված տնտեսավարող սուբյեկտները, ինչը երկրում չի խրախուսում արտադրությունը,
5. տնտեսավարող սուբյեկտների մոտ առկա են որոշակի հիմնախնդիրներ, կապված ՀՀ կառավարության 31.07.1997թ. Թիվ 314, 315 որոշումներով ամրագրված գրանցամատյանների վարման հետ:

Ելնելով սույն հետազոտություն-վերլուծության արդյունքներից՝ ներկայացված խորքային հիմնախնդիրներից յուրաքանչյուրի լուծմանն ու օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները համառոտ ներկայացված են ստորև.

1. Փաստաթղթավորմանն ու փաստաթղթաշրջանառությանը ներկայացվող տեխնիկական պահանջների բարդությունը հիմնականում բերում է նրան, որ տնտեսավարող սուբյեկտները պարզապես հրաժարվում են տվյալ փաստաթղթով նկարագրվող տնտեսական իրադարձությունը փաստաթղթավորելուց և, հետոբար, հաշվառելուց: Արդյունքում հաշվառումից դուրս են մնում մի շարք կարևորագույն ցուցանիշներ, ուստի.

- աշխատանքի վարձատրության մասով բարդությունները՝ կապված աշխատանքի գործավարձային հաշվառման հետ, բերում են աշխատանքի հաշվառման հաստիքային եղանակի կիրառման տարածմանը, որը ըստ հետազոտության արդյունքների կազմում է 76%: Սակայն, նշված մոտեցումը ժամանակակից մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի տեսաբանների մեկնաբանմամբ, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության բարձրացման տեսանկյունից ոչ ռացիոնալ է: Ասվածն առավել սուր է արտահայտվում արտադրության և ծառայությունների մատուցման ոլորտներում:
- Անաշխատունակության թերթիկների լրացման, անաշխատունակության նպաստների հաշվարկման, անաշխատունակության վճարների հետագա հաշվառման, ինչպես նաև վերջիններիս հետագա հաշվառման և փաստաթղթավորման գիտելիքների բացակայությունը (58%) հաճախ բերում է տնտեսավարող սուբյեկտների մոտ նմանատիպ տնտեսական իրադարձությունները չհաշվառելու պրակտիկայի, ինչի հետևանքով գործարարները զրկվում են անաշխատունակության գծով նպաստների գծով ծախսերը հետագայում սոցիալական վճարներից նվազեցնելու, կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամից հետ ստանալու հնարավորությունից:
- Մանրածախ առևտրի ոլորտում զեղչերի, բոնուսների, վաճառքների խթանման տարբեր զեղչային մեխանիզմների կիրառման առումով փաստաթղթավորմանը ներկայացվող պահանջների բարդությունները, կամ գիտելիքների բացակայությունը հաճախ բերում է նրան, որ տնտեսավարող սուբյեկտները չեն փաստաթղթավորում իրենց մոտ կատարվող վաճառքի խթանման տարբեր ծախսեր, ինչի հետևանքով ունենում են իրականից բարձր հարկային շահույթներ: Օրինակ, եթե տնտեսավարող սուբյեկտը կիրառում է երկու միավոր ապրանք գնելու դեպքում մեկ միավոր ապրանքի նվեր տալու վաճառքի խթանման սխեման և չի կարողանում այդ նվերի դուրսգրումը փաստաթղթավորել, կամ փաստաթղթավորելիս չի կարողանում այն ճիշտ և գրագետ գրանցել պարտադիր վարման գրանցամատյաններում, ապա այն ունենում է 30%-ով ավել հարկվող շահույթ, որը բերում է իրացման շրջանառության նկատմամբ 6% ավել շահութահարկի: Բնական է, որ տնտեսավարող սուբյեկտների մեծ մասը կձգտի չփաստաթղթավորել նաև իրացումների համապատասխան հատվածը, որպեսզի խուսափի իրեն հասանելիքից ավել հարկային բեռից:
- Տրանսպորտային միջոցների ուղեգրերի, տրանսպորտային միջոցների վեռելիքի ծախսի փաստաթղթավորման, հաշվառման հետ կապված փաստաթղթավորման ներկայացվող պահանջների մասով անհրաժեշտ գիտելիքների բացակայությունը (73%) ևս բերում է այն հետևանքի, որ տնտեսավարող սուբյեկտները հաճախ հրաժարվում են նշված ծախսերի փաստաթղթավորումից և, հետևաբար, զրկվում են այդ ծախսերը հարկման նպատակով նվազեցնելու իրավունքից: Վերջինիս արդյունքում

տնտեսավարող սուբյեկտները կանգ են առնում շրջանառությունը թաքցնելու կամ ավել հարկեր մուծելու երկրնտրանքի առջև:

- Արտադրության ոլորտում զբաղված տնտեսավարող սուբյեկտների ավելի քան 50%-ի մոտ առկա են դժվարություններ կապված հույսի և պատրաստի արտադրանքի խոտանման և/կամ դուրս գրման ակտերի փաստաթղթավորման հետ, որի արդյունքում ընդհանրապես չեն կիրառվում հույսի և արտադրանքի խոտանման և դուրս գրման ակտերը: Բնականաբար, նշված տնտեսական իրադարձությունը օրենքով սահմանված կարգով փաստաթղթավորելուց զրկված տնտեսավարող սուբյեկտը պետք է ձգտի թաքցնել համապատասխան շրջանառությունը, այլապես ստիպված կլինի վճարելու համապատասխանաբար ավել հարկեր:
- Կառուցապատման, հիմնական միջոցների դուրս գրման, կոմպլեկտավորման փաստաթղթավորման մասով, ինչպես նաև նմանատիպ տնտեսական իրադարձությունների հաշվառման մասով առկա բարդությունները հաճախ բերում են նրան, որ տնտեսավարող սուբյեկտները հրաժարվում են այդպիսի իրադարձությունները գրանցելուց, որի հետևանքով ընկերությունները կորցնում են իրենց իրական ծախսերը հաշվառելու հնարավորությունը, կամ այդ ծախսումների մասով ապագա մաշվածության ծախսերը հարկային հաշվառման համակարգում հաշվառելու հնարավորությունը, որի հետևանքով իրենց հարկային շահույթը հաճախ գերազանցում է ֆինանսական շահույթը:
- Վաճառված ապրանքների վերադարձի, կամ նմապատիպ տնտեսական իրադարձությունները փաստաթղթավորելու բարդություններն ու գիտելիքների բացակայությունը հաճախ բերում է այն հետևանքի, որ տնտեսավարող սուբյեկտների մոտ կամ օրենքի խախտումներով են գրանցվում վերադարձի հաշիվները, կամ տնտեսավարող սուբյեկտները դուրս են գրում հին հաշիվների փոխարեն նոր հաշիվներ, կատարելով առաքման գրքերում ջնջումներ, կամ էլ մատիտով են լրացնում գրքերը, որի հետևանքով էլ առաքման գրքի վարման պահանջների ստուգումների ժամանակ առաջանում են տարբեր տիպի տուգանքներ:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ տարբեր պատճառներով պայմանավորված փաստաթղթավորման բարդությունները հաճախ բերում են տնտեսավարող սուբյեկտների կողմից բարդ փաստաթղթավորում պահանջող տնտեսական իրադարձությունների գրանցումից հրաժարվելուն, ինչի հետևանքով տնտեսավարող սուբյեկտների մոտ առաջանում է իրականում կատարված ծախսերի թերգրանցում, որի հետևանքով էլ տնտեսավարող սուբյեկտները մեծամասամբ փորձում են թաքցնել տվյալ ծախսերին համապատասխան շրջանառության ծավալը:

Վերլուծության արդյունքներով տնտեսավարող սուբյեկտների 20%-ի մոտ պարբերաբար առաջանում են նմանատիպ խնդիրներ ինչը մեր կարծիքով անթույլատրելի բարձր ցուցանիշ է:

Հիմնախնդրի խորքային պատճառները, մեր կարծիքով, կայանում են նրանում, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է առաջնային փաստաթղթերի նկատմամբ բովանդակային բնույթի պարտադիր պայմաններ, իսկ ձևաթղթերի, բլանկների մասով կամայական մոտեցում: Ավելի պարզ ասած օրենսդիրը ընդամենը պահանջում է, որպեսզի, օրինակ, հարկային հաշվում պարտադիր լինի ապրանք առաքողի հասցեն, ՀՎՀՀ, անվանումը, կնիքը, ստորագրությունը և այլն, իսկ թե ոնց կլինի, ինչ ֆորմատով, ինչ չափերով, ինչ հաջորդականությամբ լրացված թողնում է լրացնողի հայեցողությանը: Առաջին հայացքից թվում է, թե տվյալ դրույթը մեծացնում է տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու ազատությունները, սակայն տվյալ մոտեցումը հանգեցնում է նրան, որ տարբեր խորհրդատուների, վերահսկող մարմինների, կամ կազմակերպությունների կողմից ՀՀ տնտեսությունում շրջանառության մեջ են դրված մի քանի տասնյակ տիպի փաստաթղթերի տիպային օրինակներ, որոնց բազմազանությունը հաճախ խճճում և շփոթության մեջ է գցում գործարարներին:

**Բարեփոխումները և միջոցառումները, որոնք կարելի է իրականացնել վերը թվարկված խնդրնդոտները վերացնելու ուղղությամբ ներառում են.**

- Առաջնային փաստաթղթերի մասով սահմանել պարտադիր, կամ ուղղորդող բնույթի տիպային ձևաթղթեր.
  - սահմանել յուրաքանչյուր տնտեսական իրադարձության համար ուղղորդող բնույթի ձևաթուղթ, թույլատրելով շեղումներ միայն ձևաթղթի տեխնիկական պահանջների մասով՝ տառատեսակի մեծություն, տառատեսակի ձև, թղթի չափսեր, թղթի և տառատեսակի գունավորում:
- Պարզեցնել առաջնային փաստաթղթերի լրացման պահանջները.
  - յուրաքանչյուր տնտեսական իրադարձության համար կիրառվող ձևաթղթերը մշակելիս առաջնորդվել այն սկզբունքով, որ տնտեսավարող սուբյեկտը կարողանա առանց նեղ մասնագիտական գիտելիքներ ունենալու և բավարար տեղեկացվածության պարագայում, հեշտությամբ և արագ լրացնել առաջնային փաստաթուղթը:
  - տպագրված ձևաթղթերը տարածելիս ձևաթղթերի հետևի էջում նշել դրանց լրացման հրահանգները՝ պարզ, հստակ, առանց երկիմաստությունների և տարրնթերցումների:
- Նմանատիպ տնտեսական իրադարձություններ նկարագրող առաջնային փաստաթղթերը համակցել մեկ առաջնային փաստաթղթով.

- ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսավարող սուբյեկտները դժվարությամբ են հարմարվում նոր տիպի, կամ տեսքի ձևաթղթերին, և մինևույն տնտեսական իրադարձությունը արտահայտող տարբերվող տեսք ունեցող ձևաթղթերով հաճախ պարզապես հրաժարվում են փաստաթղթավորելու գործարքը, ուստի առաջարկվում է յուրաքանչյուր խումբ տնտեսական իրադարձությունների համար մշակել մեկ ձևավորմամբ փաստաթուղթ, մասնավորապես՝
  - միացնել ապրանքների, ծառայությունների, աշխատանքների կամ արտադրանքի օտարման, տեղափոխման և վերադարձման գործարքների փաստաթղթերը մեկ փաստաթղթում՝ սահմանելով զեղչերի կիրառման հստակ մոտեցում, համաձայն ստորև բերված օրինակում ներկայացված նախնական մոտեցման,

օրինակ՝

Տրամադրող՝ Գրանցման հասցե՝ ՀՎՀՀ/անձնագիր Հ/Հ Բանկ Գործունեության վայրը՝	<b>ՀԱՇԻՎ ՖԱԿՏՈՒՐԱ N ....</b> .....թ.				
Ստացող՝ Գրանցման հասցե՝ ՀՎՀՀ/անձնագիր Հ/Հ Բանկ Գործունեության վայրը՝	իրացում				
	տեղափոխում				
	նվիրաբերություն				
	վերադարձ				
	կանխիկ				
	փոխանցում				
Վճարող՝ Գրանցման հասցե՝ ՀՎՀՀ/անձնագիր Հ/Հ Բանկ Գործունեության վայրը՝	նշել վանդակը				
Լրացուցիչ նշումներ					
Հ/Հ	Անվանում	Չափմ. միավ.	Քանակ	Գին /դրամ/	Գումար /դրամ/
1					
2					
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>					
<b>ԶԵՂՋ</b>					
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>					
<b>ՏՐԱՍԱԴՐՈՂ</b>		<b>ՍՏԱՑՈՂ</b>		<b>ՎՃԱՐՈՂ</b>	

- միացնել հիմնական միջոցների դուրս գրման, կառուցապատման, կոմպլեկտավորման, լուծարման, դեֆեկտավորման, շահագործման հանձնման, շահագործումից հանման, կոնսերվացման գործարքները մեկ փաստաթղթում,
- միացնել ապրանքների, պատրաստի արտադրանքի, անավարտ արտադրանքի խտտանման, դուրս գրման և նմանատիպ տնտեսական իրադարձությունները նկարագրող փաստաթղթերը մեկ փաստաթղթում,
- համակցել գույքի կամ կապիտալի տրամադրման, ինչպես նաև նմանատիպ տնտեսական իրադարձությունների հատուցումների գրանցման համար նախատեսված փաստաթղթերը:

2. կազմակերպություններում և անհատ ձեռնարկատերերի մոտ ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը վերաբերվող տնտեսական իրադարձությունների զգալի մասը կատարվում է առանց փաստաթղթավորման, որի պատճառը շրջանառության չբացահայտելու ձգտումն է.

Նշված հիմնախնդրի բացահայտումը, չհանդիսանալով սույն հետազոտության բուն առարկան, այնուամենայնիվ, արժանի է ուշադրության իր տարածվածության, ինչպես նաև նշված երևույթի ածանցյալ ազդեցությունների հետևանքով, որոնց պատճառները հակիրճ ներկայացված են ստորև.

- ստվերում աշխատելու հարկադրվածություն. տնտեսությունում առկա են լայն կիրառություն ունեցող ապրանքատեսակներ, որոնց ձեռքբերումը հնարավոր է կատարել կամ առանց փաստաթղթի կամ էլ մասնակի փաստաթղթավորմամբ: Արդյունքում տվյալ տեսակի ապրանքները վերամշակող և վերավաճառող տնտեսավարող սուբյեկտները կանգնած են հարկային գերբեռնվածության առջև և իրենց հերթին ձգտում են թաքցնել շրջանառությունը տվյալ մասով,
- անհավասար մրցակցություն, ինչը արտահայտվում է հետևյալում՝ տնտեսությունում առկա են գերբեռնված մրցակցությամբ ոլորտներ, որտեղ առաջարկի գնի 1% տատանումն անգամ բավարար է, որպեսզի կարճ ժամանակահատվածում տնտեսավարողը դուրս մղվի շուկայից, արդյունքում այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք կարողանում են որոշակիորեն խուսափել հարկերը ամբողջությամբ վճարելուց, ի վերջո շուկայից դուրս են մղում տվյալ ճյուղում գործող բարեխիղճ տնտեսավարողներին, որոնք հիմնականում ՓՄՁ սուբյեկտներ են,
- իրացման փաստաթղթավորում, ինչը արտահայտվում է նրանով, որ տնտեսավարող սուբյեկտները, որոնց կողմից առաջարկվող ապրանքների ու արտադրանքի գնորդները

չեն ցանկանում փաստաթղթավորել գնումները, իսկ առաջարկողի կողմից այդ ապրանքների մասով ձեռքբերումները փաստաթղթավորված են, և ակամայից վաճառող տնտեսավարող սուբյեկտները հայտնվում են անելանելի վիճակում, երբ իրենց հերթին ստիպված են թաքցնելու ձեռքբերումների մասով շրջանառությունը, որպեսզի չունենան նյութական ակտիվների հաշվապահական ավելցուկ:

Թվարկված երեք դեպքերից առաջին երկուսը հիմնականում վերաբերվում են հարկային և մաքսային վարչարարության հետ կապված հիմնախնդիրներին, սակայն երրորդ դեպքի սկզբնապատճառները կարող ենք տեսնել նաև փաստաթղթավորման հետ կապված խնդիրների համատեքստում: Վերջինիս մասով առաջարկվում է.

- սահմանել հստակ մեխանիզմներ, իրացման շրջանառությունը փաստաթղթավորելու ցանկություն ունեցող արտադրող և մեծածախ առևտուր իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար: Չնայած նրան, որ հարկերի մասին ՀՀ օրենքի 28 4 հոդվածի դ/կետում սահմանված է, որ առանց երկկողմանի փաստաթղթի դուրսգրման վաճառող կողմը ազատվում է տուգանքից, եթե նա կատարել է նշում այն մասին, որ գնորդը հրաժարվել է ստանալ հաշվարկային փաստաթուղթը, սակայն, տվյալ դրույթը դեռևս չի ստացել իր արտացոլումը ՀՀ կառավարության 31.07.1997թ. 314 որոշման մեջ, ինչպես նաև հստակ չի՝ կիրառական նկատառումներից ելնելով:

3. Տնտեսավարող սուբյեկտների մոտ փաստաթղթավորման կատարման պարտականությունները մեծամասնությամբ դրված են հաշվապահների վրա, ինչի արդյունքում հաշվապահները հաճախ չեն կատարում իրենց վրա դրված բուն պարտականությունները, այն է, տնտեսավարող սուբյեկտների տնտեսական միջոցների և դրանց առաջացման աղբյուրների շարժի և մնացորդների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և հիմնադիրներին, կամ մենեջերներին այդ տեղեկատվության տրամադրումն է: Նշված երկուսը հաճախ պատճառ է դառնում սխալ կառավարչական և ներդրումային որոշումների կայացմանը, ինչի հետևանքով էլ սնանկանում են կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր: Միաժամանակ, հաշվապահների գերծանրաբեռնվածությունը հաճախ հանգեցնում է հարկային հաշվառման սխալների, պարտադիր վարման գրանցամատյանների վարման սխալների, ինչպես նաև առաջնային փաստաթղթերի սխալ կազմմանը, որոնց հետևանքով էլ տնտեսավարող սուբյեկտները հաճախ տուգանվում են: Նշված հիմնախնդիրների լուծման առումով ի թիվս նախորդ հիմնախնդիրների լուծման մեխանիզմների առաջարկվում է.

➤ Խրախուսել տնտեսավարող սուբյեկտների մոտ մասնագիտացված հաշվապահական համակարգչային ծրագրերի կիրառման տարածումը, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համակարգչային մասնագիտացված ծրագրեր կիրառող տնտեսավարող սուբյեկտների մոտ հաշվապահական հաշվառման մեջ ներգրավված մասնագետների թիվը մոտ կրկնակի անգամ քիչ է: Այդ կապակցությամբ առաջարկվում է՝ իրականացնել աջակցող պետական մարմինների կողմից հաշվապահական համակարգչային ծրագրերի գնման սուբսիդավորում: Կազմակերպել անվճար կամ համաֆինանսավորմամբ դասընթացներ, սեմինարներ նշված ծրագրային փաթեթներից օգտվելու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

4. Փաստաթղթավորման ժամանակատարության և բարդության առումով հիմնախնդիրները առավել խորն են արտահայտված հարկման ընդհանուր դաշտում գործող տնտեսավարող սուբյեկտների մոտ, և հատկապես փաստաթղթավորման պահանջներով ծանրաբեռնված են արտադրության ոլորտում զբաղված տնտեսավարող սուբյեկտները: Մասնավորապես, շինարարության ճյուղում ինքնարժեքի հաշվառման համար հիմք հանդիսացող նորմատիվային բազան դեռևս խորհրդային ժամանակներում մշակված «СНИП» – ներն են, «ЕРЕР» – ներն են, «ЕННР» – ներն են, որոնք կազմված են եղել պլանային տնտեսության նախորդ դարի 60-ական թվականների հիմքով: Բնականաբար, վերջիններս չեն կարող արտացոլել շուկայական հարաբերությունների տրամաբանությունը: Օրինակ, եթե մեկ քառակուսի մետր ներկման աշխատանքներին նորմայով օգտագործվում է 0.4 լիտր ջրաէմուլսիոն ներկ, ապա ըստ նորմատիվի ավել ծախսը համարվում է գերնորմատիվային ծախս: Սակայն, վերջինս պլանային տնտեսությանը բնորոշ մոտեցում է, քանի որ շուկայական հարաբերությունների ժամանակ չի բացառվում պատվիրատու, որը կպահանջի երկու, կամ երեք անգամ կատարել ներկումը: Բնականաբար, տվյալ աշխատանքի արժեքն էլ բարձր կլինի, սակայն հարկման նպատակով նվազեցվող ծախսերը մեծ մասամբ կդառնան գերնորմատիվային, այսինքն շահութահարկի հաշվարկման ժամանակ չնվազեցվող: Բացի այդ, այսօր առկա են, և գրեթե ամեն օր ավելանում են բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնք ընդհանրապես նկարագրված չեն նորմավորող փաստաթղթերում: Այստեղ ևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ:

➤ Այդ կապակցությամբ առաջարկվում է, կիրառվող միջոցառումների շրջանակներում առավել ուշադրություն դարձնել հարկման ընդհանուր դաշտում գործող տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը, ինչպես նաև արտադրության ոլորտում զբաղված ընկերությունների և անհատ



ձեռնարկատերերի փաստաթղթավորման հիմնախնդիրներին: Առանձնահատուկ ուշադրության է արժանի պատրաստվող արտադրանքի, կամ շինարարության ինքնարժեքի հաշվառմանը վերաբերվող փաստաթղթավորման պահանջների պարզեցումը: Այդ պահանջների համապատասխանեցումն ներկայումս օգտագործվող ժամանակակից տեխնոլոգիաներին և շուկայավարման ընթացակարգերին: Անհրաժեշտություն է դարձել ինքնարժեքի հաշվառման մոտեցումների վերանայումը՝ ամրագրելով նորմաների սահմանման այլընտրանքային մեխանիզմներ:

5. Տնտեսավարող սուբյեկտների մոտ առկա են որոշակի հիմնախնդիրներ, կապված ՀՀ կառավարության 31.07.1997թ. Թիվ 314, 315 որոշումներով ամրագրված գրանցամատյանների վարման հետ: Նշված հիմնախնդիրները հիմնականում պայմանավորված են հետևյալ երկու բարդություններով: Առաջինը գրանցամատյանների ձեռքով լրացնելու բարդությունն է, որը մեծ տեսականի ունեցող տնտեսավարողների մոտ հաճախ անգամ տեխնիկապես անհնար է: Երկրորդը՝ գրանցամատյանների վարման կարգի երկիմաստությունների հետ կապված բարդություններն են, մասնավորապես՝ հասցեների տարանջատման ոչ հստակ մոտեցումները, ապրանքների ըստ էության լրացնելու բարդությունները: Այդ կապակցությամբ առաջարկվում է.

- Կիրառելի դարձնել մոտեցումներ, որոնք թույլ կտան համակարգչային տեխնիկայի և նշված գրանցամատյանների վարման համակցումը,
- Վերացնել գրանցամատյանների վարման կարգերի երկիմաստություններն ու տարընթերցումները: